

12

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

2019

Luys



Linyu®

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

2019Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 9-ԻՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ
ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ
ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

**2019Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 9-ԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ»
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ
ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ1
 2. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ 14
 3. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ19
 4. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ22
 5. «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ 29
 6. Եզրահանգումներ..... 30
- Հավելված 1. Վաղ կենսաթոշակային սխեմայի ներդրումը լեհաստանում եվ հունգարիայում 33
- Լեհաստան 33



Հունգարիա.....	36
Հավելված 2. Դատավորների վաղ կենսաթոշակի վերաբերյալ ՄԻԵԴ պրակտիկան	37
Նախապատմություն.....	37
Ջի Բի-ն և այլք ընդդեմ Հունգարիայի	38
Բական ընդդեմ Հունգարիայի.....	41

1. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի¹ (այսուհետ՝ ԴՕ) 21-րդ հոդվածում առաջարկվող փոփոխությամբ վերացվում է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննության համար հատուկ դատավորների ինստիտուտը, և նման գործերի քննությունը թողնվում է միայն քրեական մասնագիտացման դատավորներին (Նախագծի 1-ին հոդված): Առաջին հայացքից այս փոփոխությունը կարող է ողջունելի թվալ, քանի որ սահմանափակվում է այս խնդրով կարգավորումներ սահմանելու հարցում գործող ԴՕ-ի 21-րդ հոդվածի 3-րդ մասով Բարձրագույն դատական խորհրդին (այսուհետ՝ ԲԴԽ) վերապահված լայն հայեցողությունը: Այդուհանդերձ, Նախագծով առաջարկվող նոր կարգավորումը ամբողջական լուծումներ չի տալիս խնդրին և փոխարենը առաջ է բերում նոր խնդիրներ. օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելուն վերաբերող նման նույր հարցերի քննությունը թողնվում է առանց բացառության քրեական գործեր քննող բոլոր դատավորներին: Մինչդեռ այստեղ գործ ունենք գաղտնիության պահպանման, անվտանգության, հանցագործությունների կանխման ու բացահայտման և այլ առանձնահատկությունների հետ, և օրենքը թերևս պետք է որոշակի ճկունություն ունենա՝ հնարավորություն նախատեսի սահմանելու նման գործեր քննող դատավորների համար որոշակի հատուկ պահանջներ: Այս առումով պարզ չէ՝ արդյո՞ք նախարարությունը գնահատել է իր կարգավորման ազդեցությունը և վեր հանել, թե գործնականում ինչ խնդիրներ է առաջացրել գործող կարգավորումը, և որքանո՞վ է նոր կարգավորումը գերծ պահելու հնարավոր այլ խնդիրների առաջացումից:

2. ԴՕ 35-րդ հոդվածի 1-ին մասում՝ 149-րդ հոդվածի 1-ին մասով առաջարկվող փոփոխության հետ համակցության մեջ (Նախագծի 2-րդ հոդված՝ Նախագծի 26-րդ հոդվածի հետ համակցության մեջ) սահմանվում է կարգապահական տույժի նոր տեսակ՝ դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների լիազորությունները դադարեցնելը: Այս

¹ Ընդունվել է 2018թ. փետրվարի 7-ին, ՀՀՊՏ 2018.02.12/10(1368), հոդ. 143, ՀՕ-95-Ն:

կարգավորումը հակասում է Սահմանադրության 166-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ մասերին: 2015թ. փոփոխություններով Սահմանադրությունը նախատեսել է դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի լիազորությունների սահմանափակ ժամկետ՝ համապատասխանաբար 3 տարի և 6 տարի: Սահմանադրությունը, սահմանելով դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի ընտրության կարգը, միևնույն ժամանակ չի նախատեսում դատարանի նախագահի և պալատի նախագահի լիազորությունների դադարեցման հնարավորություն և ընթացակարգ: Սահմանադրությունը ելել է այն բանից, որ դատարանների նախագահները, նախ և առաջ, դատավորներ են, ինչպես մյուս բոլոր դատավորները, որոնց, ի հավելումն դատավորի բուն գործառույթների՝ վերապահված են որոշակի սահմանափակ կազմակերպական գործառույթներ: Միաժամանակ, դատարանների նախագահներին նախկինում վերապահված կազմակերպական գործառույթների հիմնական մասը, ըստ էության, վերապահվել է ԲԴԽ-ին: Այս համատեքստում, նշանակումից հետո դատարանի նախագահի կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի պաշտոնանկության ընթացակարգ չնախատեսելու սահմանադրի մոտեցումը ուղղված է եղել երաշխավորելու նշված պաշտոնատար անձանց կողմից իրենց վերապահված գործառույթների բնականոն և անխափան իրականացումը²: Ուստի, վերջիններիս պաշտոնավարումը դադարեցնելու միակ սահմանադրական հիմքը նրանց՝ որպես դատավորի լիազորությունների դադարումը կամ դադարեցումն է:

3. ԴՕ 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը (Նախագծի 3-րդ հոդված) հանելով՝ դատավորների միջև գործերի բաշխման և վերաբաշխման կարգից հանվում է ԲԴԽ-ին վերապահված իրավասությունը՝ սահմանելու «մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ներկայացված միջնորդությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների բաշխման, վերաբաշխման առանձնահատկությունները, ինչպես նաև դրանք քննող դատավորների ցանկը»: Սա գործնականում կարող է լուրջ խնդիրների առաջ կանգնեցնել քննիչներին և դատախազներին՝ տապալելով նրանց աշխատանքը: ԴՕ-ով նախատեսված այս մեխանիզմը թույլ էր տալիս վերջիններիս հստակ և

² Օրինակ, ԴՕ 32-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի նախագահները դատավորի կողմից վարքագծի կանոնի առերևույթ խախտում հայտնաբերելիս այդ մասին համապատասխան հաղորդում են ներկայացնում Ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովին, դատարանի բնականոն գործունեության ապահովման հետ կապված հարցերով դիմում են Բարձրագույն դատական խորհուրդ, Ընդհանուր ժողով և Ընդհանուր ժողովի հանձնաժողովներ, դատավորներին տրամադրում են արձակուրդ և այլն:

նախապես տեղյակ լինելու նման միջնորդությունների քննության համար համապատասխան օրվան և ժամին, այդ թվում՝ ոչ աշխատանքային օրերին և ժամերին, հասանելի դատարանների ու դատավորների մասին: Մինչդեռ առաջարկվող փոփոխությամբ՝ գործերի զուտ պատահական բաշխման համակարգի միջոցով, այս խնդիրը հնարավոր չէ լուծել:

4. ԴՕ 68-րդ հոդվածի 4-րդ մասում (Նախագծի 5-րդ հոդված) առաջարկվող կարգավորումը, որով էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը դատավորի գրավոր դիմումի հիման վրա տալիս է դատավորի էթիկայի կանոնի խորհրդատվական բնույթի մեկնաբանություններ, իրավամբ թխում է այս կանոնների ծագման աղբյուրի տրամաբանությունից: Սակայն, հետևողական կլինե՞ր, եթե Նախագծով իրացվեր նաև Վենետիկի հանձնաժողովի կողմից ԴՕ նախագծի վերաբերյալ 2017թ. կարծիքում արված առաջարկությունը և կարգապահական հանձնաժողովին դատավորի վարքագծի կանոնների հարցերով խորհրդատվական կարծիքներ տալու իրավասությունը հանվեր (ԴՕ հոդված 66, մաս 4): Կարգապահական վարույթ հարուցող մարմնին նման իրավասությամբ օժտելը կարող է վերջինիս համար կաշկանդող նշանակություն ունենալ³: Բացի այդ, Սահմանադրությունը նախատեսել է դատավորների անկախության համար պատասխանատու մեկ պետական մարմին, այն է՝ ԲԴԽ-ն: Վերջինս էլ պետք է պատասխանատու լինի դատավորի վարքագծի հարցերով պարզաբանումներ, ինչպես նաև դատական իշխանության անկախության և հեղինակության հարցերով որոշումներ կայացնելու համար:

5. ԴՕ 70-րդ հոդվածի 2-րդ մասում (Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մաս) նախատեսվող փոփոխությունների նպատակն անհասկանալի է: Մասնավորապես՝ պարզ չէ, թե ինչու՞ է արդարադատության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) առաջարկում հրաժարվել դատավորի վարքագծի այնպիսի կանոններից, ինչպիսիք են ԴՕ 70-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ, 10-րդ և 12-րդ կետով նախատեսվածները⁴: Միաժամանակ, 14-րդ կետի առաջարկվող վերաձևակերպումը, կարծում ենք՝ ավելի նեղ է, քան գործող կարգավորումը: Գործող ձևակերպումը պարտավորեցնում է դատավորին «ողջամտության սահմաններում իրեն դրսևորել այնպես, որ նվազագույնի հասցվեն ինքնաբացարկի անհրաժեշտություն առաջացնող դեպքերը»: Օրինակ, եթե դատավորը

³ CDL-AD(2017)019, Venice Commission Opinion On The Draft Judicial Code of Armenia, adopted by the Venice Commission at its 112th Plenary Session, կետ 62:

⁴ «4) բարեխղճորեն և լիարժեք կատարել իր պաշտոնական պարտականությունները, համագործակցել դատարանի աշխատակազմի և այլ դատավորների հետ.

10) ապահովել իր պատշաճ մասնագիտական պատրաստվածությունն ու հմտությունների շարունակական կատարելագործումը.

12) դատական նիստերը վարել պատմունքանով.»:

երաշխավոր է հանդես գալիս խոշոր վարկային պայմանագրով՝ իմանալով, որ վարկատու բանկը գտնվում է իր տարածքային ընդդատության տիրույթում: Այսինքն՝ դատավորը բոլոր դեպքերում և առհասարակ պարտավորվում է դրսևորել շրջահայացություն, զսպվածություն՝ չառաջացնելու համար ինքնաբացարկի հիմքեր: Մինչդեռ 14-րդ կետի՝ Նախագծով առաջարկվող վերաձևակերպումը ավելի նեղ է և վերաբերում է միայն այնպիսի վարքագծին, որով դատավորը ուղղակի դիտավորությամբ նպատակ ունի ստեղծել ինքնաբացարկի հիմքեր:

6. ԴՕ 73-րդ հոդվածի 1-ին մասից (Նախագծի 9-րդ հոդված) առաջարկվում է հանել նվեր ստանալու արգելքի պայմանավորումը, «եթե ողջամտորեն կարող է ընկալվել, որ այն կապված է իր պաշտոնեական պարտականություններն իրականացնելու հետ»: Եթե նպատակը «նվեր» հասկացության հստակ տարբերակման չափանիշներ սահմանելն է, թերևս առավել նպատակահարմար կլիներ, որ ԴՕ 73-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված «նվեր» հասկացության սահմանման ժամանակ հղումը կատարվեր ոչ թե «սույն օրենսգրքին», այլ 73-րդ հոդվածի 1-ի մասին:

7. Խնդրահարույց է ԴՕ 77-րդ հոդվածի 4-րդ մասում (Նախագծի 10-րդ հոդված) առաջարկվող էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կազմը: Նախագծով առաջարկվում է դրա կազմում ներառել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մեկ ներկայացուցիչ, ինչպես նաև վերջին հինգ տարիներին մարդու իրավունքների պաշտպանության կամ դատական համակարգի հանրային հաշվետվողականության բարձրացման ոլորտներում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների երկու ներկայացուցիչ: ԴՕ 74-րդ հոդվածի համաձայն՝ դատավորների ընդհանուր ժողովը *դատավորների ինքնակառավարման* մարմին է, հետևաբար՝ դրա կազմում դատավորներից բացի՝ այլ անձանց մասնակցությունը անթույլատրելի է և հակասում է ինքնակառավարման էությանը: Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմիններին միջազգային փաստաթղթերով խիստ պահանջներ են առաջադրվում, քանի որ այդ մարմինների գործունեությունը սերտորեն առնչվում է դատավորի անկախության հետ: Կորպորատիվիզմի հավասարակշռումը ոչ դատավոր անդամներով կարևորվում է այն կարգապահական մարմիններում, որոնք պատասխանատու են կարգապահական խախտումների վերաբերյալ գործեր քննելու և լուծելու համար: Բուլղարիայի վերաբերյալ կարծիքում Վենետիկի հանձնաժողովը մատնանաշել է **միայն դատավորներից բաղկացած** փոքր փորձագիտական մարմնի մեխանիզմի մասին, որը դատավորների վարքագծի հարցերով կարծիք կներկայացնի մինչև իրավասու անկախ մարմնի կողմից

վերջնական որոշման կայացումը⁵: ՀՀ Սահմանադրությունը կորպորատիվ շահերի հակակշռման խնդիրը արդեն իսկ լուծել է դատավոր և ոչ դատավոր անդամներից բաղկացած ԲԴԽ պարիտետային կազմի միջոցով⁶, իսկ կարգապահական վարույթի հարուցման ընթացակարգերում ԴՕ-ն կորպորատիվիզմը հավասարակշռել է վարույթի հարուցող սուբյեկտների կազմի միջոցով՝ կարգապահական հանձնաժողով և արդարադատության նախարար: Արդարադատության նախարարին վերապահված վարույթ հարուցելու իրավասությունը ուղղված է հակակշռելու հենց նշված կորպորատիվիզմի ռիսկերը⁷: Այս համատեքստում Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կազմում ոչ դատավոր անդամների ներմուծման առաջարկվող տարբերակը որևէ կերպ չի բխում դատական իշխանության ինքնակառավարման, դատավորների անկախության սկզբունքներից: Ավելին, Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կազմում ընդգրկման ենթակա ՀԿ-ների ներկայացուցիչների ընտրությունը Նախագծով վերապահված է ԲԴԽ-ին, որը, ի վերջո, հանդես է գալու որպես Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից հարուցված վարույթներով գործը քննող և որոշում կայացնող ատյան: Այս մոտեցումը կարելի է նույնացնել դատարանների կողմից իրենց առջև մեղադրանք ներկայացնող դատախազ ընտրելուն, ինչը որևէ պարագայում չի կարող լինել արդյունավետ կառուցակարգ:

8. Ողջունելի է ԴՕ 84-րդ հոդվածում (Նախագծի 12-րդ հոդված) ԲԴԽ նախագահի պաշտոնավարման ժամկետի սահմանափակումը, սակայն առաջարկվող 1 տարվա պաշտոնավարման ժամկետը գուցե չափազանց կարճ է: Միաժամանակ, Նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ կետով առաջարկվում է ԲԴԽ նոր նախագահի ընտրությունը իրականացնել նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ 10-օրյա ժամկետում: Մինչդեռ գործող կարգավորմամբ նոր նախագահի ընտրության ժամկետի հաշվարկի սկիզբը կապվում էր ԲԴԽ անդամի թափուր տեղը համալրվելու պահի հետ: Դա հնարավորություն է տալիս ԲԴԽ նախագահի ընտրությունը իրականացնել այն բանից հետո, երբ ԲԴԽ նախկին նախագահի (որը նաև անդամ է) թափուր տեղը համալրվել է ԲԴԽ նոր անդամով: Այսինքն՝ ԲԴԽ նախագահը ընտրվում էր բոլոր անդամների կազմի համալրումից հետո, իսկ Նախագծով առաջարկվող կարգավորմամբ մեկ անդամ, որը հետագայում է

⁵ A means to achieve this could be to have a small expert body **composed solely of judges** giving an opinion on the capacity or behaviour of the judges concerned before an independent body would make a final decision.”

CDL-AD(2003)012, Memorandum: Reform of the Judicial System in Bulgaria, կետ 15

⁶ Պարիտետի իմաստը և առավելությունը բազմիցս ներկայացվել է Սահմանադրության նախագծի հիմնավորումներում, ուստի հարկ չենք համարում անդրդառանալ դրան:

⁷ Այս առումով տե՛ս նաև CDL-AD(2017)019, կետ 135:

ընտրվելու, հնարավորություն չի ունենալու մասնակցել ԲԴԽ նախագահի ընտրությանը:

9. ԴՕ 90-րդ հոդվածի 6-րդ մասում (Նախագծի 15-րդ հոդված) առաջարկվող փոփոխությամբ դատավորը, որի վերաբերյալ կարգապահական վարույթի գործ է քննում ԲԴԽ-ն, զրկվում է դռնփակ նիստում գործի քննություն պահանջելու իրավունքից, քանի որ դռնփակ քննության հարցի որոշումը թողնվում է ԲԴԽ որոշմանը: Մինչդեռ, հաշվի առնելով կարգապահական վարույթի գործերի բնույթը և դրանց ազդեցությունը դատավորի հեղինակության վրա, Վենետիկի հանձնաժողովը ՀՀ ԴՕ վերաբերյալ իր 2014 և 2017 թվականների կարծիքներում ընդգծել է դատավորի պահանջով դռնփակ քննություն անցկացնելու անհրաժեշտությունը⁸:

10. Խիստ խնդրահարույց են ԴՕ 92-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչելու և 94-րդ հոդվածի 6-րդ մասում (Նախագծի 16-րդ և 17-րդ հոդվածներ) առաջարկվող կարգավորումները, որոնք պետք է դիտարկել համատեքստում: ԴՕ 92-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչելու արդյունքում հանվում են որպես դատարան հանդես գալու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նիստի իրավազորության կարգավորումները, որոնց համաձայն ԲԴԽ նիստն իրավազոր է անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի ներկայության դեպքում: Նիստի իրավազորության և քվեարկության ձայներին ներկայացվող պահանջների խիստ կարգավորումներով ԴՕ-ն լրացուցիչ երաշխիքներ էր ստեղծում դատավորի անկախության համար նման կարևոր հարցերում որոշումների կայացման համար⁹: Հաշվի առնելով ԲԴԽ կազմում ներդրված դատավոր և ոչ դատավոր անդամների պարիտետը՝ որպես դատարան հանդես գալու դեպքում 2/3-րդ քվորումի պահանջը ուղղված է երաշխավորելու, որպեսզի առանցքային որոշումները անպայմանորեն կայացվեն դատավոր և ոչ դատավոր անդամների պարտադիր մասնակցությամբ՝ կանխելով տարբեր շահերով պայմանավորված այս կամ այն անդամի բացակայությունը նիստից: Փոխարենը՝ Նախագծով առաջարկվող կարգավորումները խաթարում են այս մոդելը՝ նախատեսելով նիստին ներկա անդամների երկու երրորդով որոշումների ընդունման հնարավորություն: Նախագծով առաջարկվող կարգավորմամբ ստացվում է, որ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումներն ընդունվում են ԲԴԽ նիստին ներկա խորհրդի

⁸ CDL-AD(2017)019, կետ 139, CDL-AD(2014)007, Joint Opinion on the draft Law amending and supplementing the Judicial Code (evaluation system for judges) of Armenia, կետ 97, Տե՛ս նաև See CDL-AD(2014)028, Opinion on the Draft Amendments to the Law on the High Judicial Council of Serbia, կետ 35 և 37:

⁹ Սահմանադրության 175-րդ հոդվածը նախատեսում է այն բացառիկ դեպքերը, երբ ԲԴԽ-ն հանդես է գալիս որպես դատարան:

անդամների ծայների երկու երրորդով, իսկ 94-րդ հոդվածի 6-րդ մասում (Նախագծի 17-րդ հոդված), այնուամենայնիվ, պահպանվել է այն մոտեցումը, որ ԲԴԽ անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և ԲԴԽ անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ծայների առնվազն երկու երրորդով: Ստացում է, որ որպես դատարան հանդես գալու դեպքում ԲԴԽ-ն նիստ կարող է անցկացնել ավելի փոքր քվորումով, սակայն այդ նիստի արդյունքում կայացվող որոշումների համար անհրաժեշտ կլինի ծայների ավելի մեծ քանակ: Չէ՞ որ որպես դատարան հանդես գալու դեպքում ԲԴԽ-ի համար պարզ չէ, թե ինչպիսի որոշում է կայացվելու գործի քննության արդյունքներով, իսկ Նախագծի կարգավորումների պարագայում՝ կախված որոշման բնույթից, փաստորեն կարող է տարբերվել պահանջվող ծայների քանակը: Միաժամանակ, ստացվում է, որ ԲԴԽ անդամները կարող են չմասնակցել նիստին, այլ միայն քվեարկությանը: Նման կարգավորումը տրամաբանական չէ և խնդրահարույց է:

11. ԴՕ 97-րդ հոդվածի 1-ին մասում (Նախագծի 18-րդ հոդված) առաջարկվում է դատավորների թեկնածուների հավակնորդների տարիքային շեմի իջեցում քսանութից քսանհինգ՝ զուգահեռաբար մասնագիտական փորձառության 5 տարվա պահանջը փոխարինելով 3-ով: Նախարարությունը դա պատճառաբանում է «դատական համակարգ երիտասարդ, համակարգի այլ ներկայացուցիչների հետ կախվածության կամ կապվածության մեջ չգտնվող անձանց ներգրավելու նպատակով»: Միջազգային փորձի բազմաթիվ ոչինչ չասող օրինակների թվարկման փոխարեն, նախարարությունը, թերևս, պետք է հիմնավորի, թե ինչու է անհրաժեշտ նման փոփոխությունը՝ այն դեպքում, երբ համանման փորձառություն արդեն իսկ ունեցել ենք անցյալում (2007թ. փետրվարի 21-ի Դատական օրենսգրքում դատավորի թեկնածությունների համար սահմանված 22 տարեկանի ցենզը 2014թ. հունվարի 10-ին ընդունված օրենքով բարձրացվեց 28 տարեկանի): Նույնը վերաբերում է ԴՕ 106-րդ հոդվածի 1-ին մասում (Նախագծի 20-րդ հոդված) առաջարկվող՝ իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող անձանց՝ թեկնածուների ցուցակում ընդգրկվելու համար դասավանդման ցենզի իջեցմանը:

12. ԴՕ 98-րդ հոդվածի 2-րդ մասում (Նախագծի 19-րդ հոդված) առաջարկվում է որակավորման ստուգմանը մասնակցել ցանկացող հավակնորդների կողմից ԲԴԽ ներկայացվող լրացուցիչ փաստաթուղթ նախատեսել «Հանրային ծառայության մասին» օրենքի պահանջների պահպանմամբ լրացված հայտարարագիրը Կոռուպցիայի կանխարգելման

հանձնաժողով ներկայացրած լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը: Նախ պետք է նշել, որ «Հանրային ծառայության մասին» օրենքը նախատեսում է հայտարարագրման երեք տեսակ՝ 1) պաշտոնը ստանձնելիս, 2) պաշտոնավարման ընթացքում (տարեկան հայտարարագրեր) և 3) պաշտոնավարումը դադարեցնելիս (հոդված 34, մաս 4): Այս մեխանիզմի իմաստն այն է, որպեսզի Հանձնաժողովը կարողանա գնահատել հանրային ծառայողի գույքի փոփոխությունը նրա պաշտոնավարման ողջ ընթացքում: Մինչդեռ որակավորման ստուգմանը մասնակցել ցանկացող հավակնորդների կողմից հայտարարագրի ներկայացումը որևէ կերպ չի տեղավորվում այս համակարգի մեջ և պարզ չէ, թե ի՞նչ նպատակի է ծառայելու: Փոխարենը՝ այս կերպ ավելորդ բարդացվում է դիմելու՝ առանց այն էլ փաստաթղթատար գործընթացը, ինչպես նաև անհարկի ծանրաբեռնվում է կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Միգուցե նման պահանջ կարող էր նախատեսել ԲԴԽ-ում հարցազրույցի փուլից առա՞ջ՝ միայն գրավոր քննության փուլը հաղթահարած հավակնորդների համար, չնայած, ինչպես վերևում ասվեց, նման հայտարարագրի բովանդակությունը ստուգելը որևէ արդյունք չի տալու: Փոխարենը՝ առաջարկվող կարգավորումը առաջացնում է այն մտահոգությունը, թե արդյո՞ք կոռուպցիայի դեմ պայքարի անվան տակ չափից ավելի չի իջեցվում մարդու մասնավոր կյանքի սահմանադրական իրավունքի պաշտպանությունը, արդյո՞ք մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի (Սահմանադրության 31 հոդված) տեսանկյունից արդարացված և համաչափ է այս իրավունքին նման միջամտությունը: Ավելին, հայտարարագիրը տեխնիկական պատճառներով սխալ լրացնելու դեպքում կարող են ավելորդ խոչընդոտներ ստեղծվել անձի՝ քննությանը մասնակցելու գործընթացում:

13. Նախագծով առաջարկվող փոփոխությունների առանցքային մասը վերաբերում է դատավորի կարգապահական պատասխանատվության հիմքերի և ընթացակարգի վերանայմանը: Որպես հիմնավորում նախարարությունը նշվում է՝ «կարգապահական պատասխանատվության հիմքերը ձևակերպված են այնքան ընդհանուր, խրթին և բազմաշերտ, որ խախտվում է իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքը, իսկ ԲԴԽ հայեցողությունն օրենքի մեկնաբանության հարցում չափազանց լայն է և կարող է հանգեցնել սուբյեկտիվիզմի»:

Այս առումով, Նախագծով առաջարկվող կարգավորումների իմաստն ու դրանց համապատասխանությունը միջազգային լավագույն փորձին հիմնավորելու փոխարեն, նախարարության հիմնավորումները պարզապես խեղաթյուրում են Վենետիկի հանձնաժողովի կարծիքներում արտահայտված գնահատականները՝ դրանք անուղղակիորեն փորձ անելով ներկայացնել որպես ԴՕ կարգապահական

պատասխանատվության դրույթների շուրջ հնչեցված քննադատություն: Այսպես, Նախագծի հիմնավորման մեջ նշվում է, թե «Ընդհանուր առմամբ, կարգապահական պատասխանատվության հիմքերն անորոշության և տարամեկնաբանությունների տեղիք են տալիս, այնինչ Վենետիկի հանձնաժողովը բազմիցս ընդգծել է, որ այն դեպքերում, երբ ենթադրվում է դատավորների կարգապահական պատասխանատվության նախատեսում, կարգավորումները պետք է լինեն շատ ավելի հստակ»: Մինչդեռ, պետք է ընդգծել՝ չնայած այն հանգամանքին, որ դատավորի կարգապահական պատասխանատվության հիմքերի հստակ սահմանումը բավական բարդ խնդիր է, Վենետիկի հանձնաժողովը արձանագրել է, որ որոշակի անորոշություններից բացարձակապես խուսափելը կարող է անհնարին լինել¹⁰, և միջազգային պրակտիկայում այս առումով չկան միանշանակ դեղատոմսեր, այդուհանդերձ Վենետիկի հանձնաժողովը ԴՕ նախագծի վերաբերյալ 2017թ. կարծիքում կարգապահական վարույթի հիմքերի վերաբերյալ, ընդհանուր առմամբ, հանդես է եկել բավական մեղմ քննադատությամբ և նույնիսկ՝ դրական գնահատականով¹¹: Փոխարենը՝ նախարարության կողմից ներկայացվող Նախագծի հիմնավորումներում և ԴՕ կարգապահական պատասխանատվության հիմքերի անորոշության վերաբերյալ պնդումները չեն հիմնավորված կոնկրետ փաստերով, որոնք թույլ կտային հստակ դատողություն անել, թե ԴՕ-ի կարգավորումները գործնականում ինչ խնդիրներ են առաջացրել, ինչ խոչընդոտներ են ստեղծել կարգապահական պատասխանատվության օբյեկտիվ գործընթաց իրականացնելու համար:

Նախարարության վերոհիշյալ պնդման մասով կարելի է փաստել ճիշտ հակառակը, որ Նախագծով առաջարկվող կարգավորումները զգալի հետընթաց են պարունակում՝ լայն դռներ բացելով դատավորի նկատմամբ միջամտության համար, նշանակալիորեն թուլացնելով նրա անկախությունը և միայն կոպիտ, աններելի և դատական իշխանության հեղինակությունը խաթարող արարքների, մասնագիտական լուրջ թերացումների համար պատասխանատվություն սկզբունքը: Այսպես.

1) ԴՕ 142-րդ հոդվածի 6-րդ մասի առաջարկվող խմբագրությամբ (Նախագծի 21-րդ հոդվածի 4-րդ կետ) զգալիորեն ընդլայնվում է որպես էական կարգապահական խախտում որակման ենթակա արարքների շրջանակը՝ դրանով իսկ նպատակ ունենալով ստեղծել Սահմանադրության 164-րդ հոդվածի 9-րդ մասի

¹⁰ Տե՛ս CDL-AD(2017)019, կետ 67:

¹¹ Տե՛ս CDL-AD(2017)019, մասնավորապես, կետ 66, 130, 157:

հիման վրա դատավորի լիազորությունները դադարեցնելու լայն հնարավորություններ:

- Նախագծի հիմնավորումներում նախարարությունը սխալաբար պնդում է անում, թե «Ստացվում է, որ Օրենսգրքի 69 և 70-րդ հոդվածներում նշված վարքագծի կանոնների *ոչ կոպիտ խախտումները* (բացառությամբ պարտադիր վերապատրաստում անցնելու պարտականությունը չկատարելու և լիազորությունների իրականացմանը միջամտության մասին ԲԴԽ-ին չհայտնելու) ընդհանրապես ենթակա չեն պատասխանատվության»: Մինչդեռ ԴՕ 142-րդ հոդվածի 3-րդ մասը հստակ կարգապահական պատասխանատվության հիմքերի մեջ հստակ ներառում է նաև «դատավորի վարքագծի կանոնի պարբերաբար կատարված այն խախտումը, որը, առանձին վերցրած, կարող է այդպիսին չհամարվել, **սակայն իր պարբերականությամբ հեղինակազրկում է դատական իշխանությանը**»: Իսկ Նախագծով առաջարկվող միակ «առաջընթացը» այն է, որ պարբերաբար կատարվող խախտումները նախատեսվում են միայն որպես էական կարգապահական խախտում (քանի որ Նախագծով ԴՕ 142-րդ հոդվածի 3-րդ մասը ուժը կորցնում է)¹² ինչը հանգեցնում է ամենից խիստ հետևանքի՝ դատավորի լիազորությունների դադարեցման:

- Ընդառաջ գնալով դատական իշխանության անկախության բնագավառում միջազգային բազմաթիվ փաստաթղթերի պահանջներին՝ ԴՕ 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը դատավորի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը դիտարկում էր որպես կարգապահական պատասխանատվության հիմք միայն այն դեպքում, երբ խախտումն **ակնհայտ է և կոպիտ, կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ**: Դեռևս 2014թ. ԴՕ փոփոխություններով «ակնհայտ և կոպիտ» խախտում հասկացությունների ներմուծումը և դրանով իսկ՝ դատավորին պատասխանատվության ենթարկելու հիմքերի հստակեցումն ու սահմանափակումը ողջունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից¹²: ԴՕ ներկայիս ձևակերպմամբ դատավորի կողմից թույլ տրված օրենքի խախտման համար դատավորին պատասխանատվության ենթարկելը պայմանավորվել է երկու պայմանների միաժանակյա առկայությամբ. մի կողմից՝ մեղքի բնույթով (դիտավորություն կամ կոպիտ անփութություն), մյուս կողմից՝ խախտման բնույթով (ակնհայտ և կոպիտ): Իր հերթին «կոպիտ անփութության» որակման համար կարևոր է ոչ միայն մեղքի ձևը (*mens rea*), այլ նաև՝ դրա արդյունքում առաջացած վնասի ծանրությունը (*actus reus*): Ըստ այդմ, ԴՕ ներկայիս ձևակերպմամբ դատավորի կողմից թույլ տրված օրենքի ոչ թե ցանկացած կոպիտ անփութությամբ կատարված խախտում է համարվում կարգապահական պատասխանատվության

¹² CDL-AD(2014)007, կետ 113-115, CDL-AD(2017)019, կետ 130-131:

հիմք, այլ միայն այն խախտումները, որոնք եղել են միաժամանակ և՛ անկնհայտ, և՛ կոպիտ: Այսինքն՝ ԴՕ կարգավորմամբ բացառվել է *de minimis* խախտումների համար դատավորի պատասխանատվությունը, եթե անգամ դրանք կատարվել են կոպիտ անփութությամբ¹³: Դրանով իսկ ԴՕ-ն նվազագույնի է հասցնում արդարադատություն իրականացնելիս դատավորի կայացրած ակտերի համար պատասխանատվության դեպքերը՝ այնպես, որ դատավորները պատասխանատվության չենթարկվեն իրենց որոշումների կամ վճիռների բովանդակության, այդ թվում՝ տարբեր դատարանների կողմից իրավական նորմերի տարաբնույթ մեկնաբանության, դատական սխալների օրինակների համար¹⁴: Այս մոտեցման հիմքում ընկած է այն սկզբունքը, որ դատական իշխանության անկախությունը առավել բարձր արժեք է, քան առանձին դատական սխալները, որոնք, որպես կանոն, հնարավոր է վեր հանել և ուղղել բողոքարկման իրավունքի միջոցով: Դատական ակտերի համար դատավորի պատասխանատվության լայն հնարավորությունների ստեղծումը առնչվում է դատավորի անկախության շատ նուրբ ոլորտի՝ մեծ ռիսկեր առաջացնելով դատավորին գործունեությանը միջամտելու, նրան ազդեցության տակ պահելու համար, ինչի արդյունքում կարող է արմատապես խաթալվել դատական իշխանության անկախությունը: Մինչդեռ Նախագծով առաջարկվող կարգավորման արդյունքում ցանկացած դատական սխալ կարող է դառնալ կարգապահական պատասխանատվության հիմք, քանի որ ըստ նախագծի նյութական կամ դատավարական իրավունքի՝ նորմի խախտումը կարգապահական պատասխանատվության հիմք է, եթե կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ: Իսկ «արարքը համարվում է կոպիտ անփութությամբ կատարված, եթե դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում *ողջամտորեն* կարող էր և պարտավոր էր դա անել»:

- Նախագծով 142-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 3-րդ կետերում կիրառվում է «...հեղինակագրկում է դատական իշխանությունը» եզրույթը (Նախագծի 21-րդ հոդվածի 6-րդ մաս): Վենետիկի հանձնաժողովը քննադատության է արժանացրել նման անորոշ ձևակերպումները: Ըստ Հանձնաժողովի՝ նմանօրինակ ձևակերպումների գործածումը վտանգավոր է դատական իշխանության անկախության համար¹⁵: Հնարավոր խնդիրներից խուսափելու նպատակով

¹³ CDL-AD(2017)019, կետ 131:

¹⁴ Joint Opinion on the Constitutional Law on the Judicial System and Status of Judges of Kazakhstan, CDL-AD(2011)012, կետ 60: Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում Դատական անկախության վերաբերյալ Կիևյան 2010թ. հանձնարարականներ, կետ 25:

¹⁵ St'u Venice commission opinion on the laws on disciplinary liability and evaluation of judges of "the former Yugoslav Republic of Macedonia", adopted by the Venice Commission at its 105th Plenary

Հանձնաժողովը հորդորել է նման հասկացություններն օժտել հստակ բովանդակությամբ¹⁶: Անորոշ ձևակերպումներից խուսափելու հիմնական նպատակն է՝ հնարավորինս մատչելի դարձնել այն արարքի նկարագրությունը, որը հանգեցնում է կարգապահական պատասխանատվության: Արարքի հստակ նկարագրությունը պետք է օգնի դատավորին կանխատեսելու սեփական գործողությունների հետևանքները¹⁷:

2) Նախարարությունը որևէ կերպ չի հիմնավորում, թե ինչու են կարգապահական պատասխանատվության հիմքերից հանվում ԴՕ 142-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերը¹⁸, որոնք լրացուցիչ երաշխիքներ էին դատավորի շարունակական մասնագիտական բարձր պատրաստվածությունն ապահովելու և նրան ապօրինի միջամտությունից պաշտպանելու համար: Կարելի՞ է արդյոք ենթադրել, որ նման հարցերը նախարարության համար այլևս արդիական չեն:

3) ԴՕ 144-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում (Նախագծի 22-րդ հոդվածի 1-ին կետ, «բ» ենթակետ) երկարացվում է դատավորի վարքագծի կանոնները խախտելու հիմքով վարույթ հարուցելու վաղեմության ժամկետը՝ այն հայտնաբերելուց հետո *մեկամսյա ժամկետը* փոխարինելով *եռամսյա ժամկետով*: Սա նույնպես ստեղծում է դատավորի նկատմամբ միջամտելու և նրան ճնշման տակ պահելու հնարավորություններ: Ստացվում է՝ խախտումն արդեն իսկ հայտնաբերվել է, սակայն վարույթ հարուցող սուբյեկտը երեք ամիս շարունակ դատավորին պահում է անորոշության մեջ՝ սպառնալով կարգապահական վարույթի հարուցմամբ:

14. Խիստ խնդրահարույց է ԴՕ 147-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետում (Նախագծի 25-րդ հոդված) առաջարկվող փոփոխությունը, որով հարուցված կարգապահական վարույթի ընթացքում վարույթ հարուցող մարմնին իրավունք է

Session, CDL-AD(2015)042, կետ 16, տե՛ս նաև Venice commission opinion on the draft judicial code adopted by the Venice Commission at its 112th Plenary Session, CDL-AD(2017)019, կետ 63:

¹⁶ Տե՛ս նույն տեղը՝ CDL-AD(2015)042, կետ 36:

¹⁷ Տե՛ս Joint opinion of the Venice Commission and OSCE/ODIHR on the draft amendments to the legal framework on the disciplinary responsibility of judges in the Kyrgyz Republic, CDL-AD(2014)018, կետ 24:

¹⁸ «4) դատավորի կողմից սույն օրենսգրքի 12-րդ հոդվածով, 105-րդ հոդվածի 2-րդ մասով, 156-րդ հոդվածի 3-րդ մասով, 159-րդ հոդվածի 3-րդ մասով, 167-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պարտադիր վերապատրաստում անցնելու և փորձաշրջանի ղեկավարի՝ իր համար սահմանված պարտականությունները չկատարելը.

5) սույն օրենսգրքով սահմանված կարգով էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին արդարադատության և օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացման կապակցությամբ իր գործունեությանը միջամտելու կամ օրենքով չնախատեսված այլ ներգործության մասին չհայտնելը»:

վերապահվում առաջարկելու *ֆիզիկական և իրավաբանական անձանց* ներկայացնել կարգապահական վարույթի համար նշանակություն ունեցող *տեղեկությունների վերաբերյալ նյութեր*: Գործող ԴՕ-ն սահմանափակվում է միայն «հաղորդում ներկայացրած» անձով և խոսքը վերաբերում է «կարգապահական վարույթի համար նշանակություն ունեցող տեղեկությունների վերաբերյալ նյութեր», այսինքն՝ ապացույցներ ներկայացնելուն (ԴՕ հոդված 14, 3-րդ մաս, 4-րդ կետ): Նախագծով առաջարկվող կարգավորումը մի կողմից խախտում է կարգապահական վարույթի գաղտնիության սկզբունքը, որը նախատեսված է նույն հոդվածի 9-րդ մասում: Մյուս կողմից՝ Նախագիծը, փաստորեն, թույլ է տալիս կարգապահական հանձնաժողովին՝ հանդես գալու ֆիզիկական և իրավաբանական անձանց ուղղված հրապարակային կոչով՝ դատավորի դեմ **ցանկացած տեղեկություն** (և ոչ միայն ապացույց) ներկայացնելու վերաբերյալ: Նման կարգավորումը մեծ ռիսկեր է պարունակում դատական իշխանության և դատավորի անկախության ու հեղինակության համար և անթույլատրելի է:

15. Նախագծի 30-րդ հոդվածով նախատեսվում է ներդնել ԲԴԽ որոշումների բողոքարկման համակարգ, ինչը ողջունելի է: Իհարկե, պետք է ընդգծել, որ դա ոչ թե վերաքննության մեխանիզմ է դասական իմաստով, ինչպես ներկայացվում է Նախագծի հիմնավորումներում, այլ ընդամենը՝ նոր երևան եկած հանգամանքներով ԲԴԽ որոշման վերանայման ընթացակարգ: Այս համատեքստում անհասկանալի է Նախագծի 29-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունը, որով ԲԴԽ որոշումը բողոքարկելու համար սահմանվում է հրապարակման պահից մեկամսյա ժամկետ: Չէ՞ որ Նախագծի 30-րդ հոդվածով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը բողոքարկելու իրավունքը պայմանավորվում է այնպիսի ապացույց կամ հանգամանք ի հայտ գալու հետ, որը «դատավորը նախկինում չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով և որը ողջամտորեն կարող է ազդել որոշման վրա»: Այսինքն՝ այդպիսի հանգամանքների ի հայտ գալը չի կարող կանխատեսելի լինել և հետևաբար՝ չի կարող սահմանափակվել ԲԴԽ որոշումը հրապարակելուց հետո մեկամսյա ժամկետով:

16. Միաժամանակ, անթույլատրելի և չպատճառաբանված է ԴՕ 155-րդ հոդվածի 8-րդ մասը ուժը կորցրած ճանաչելը (Նախագծի 29-րդ հոդվածի 2-րդ կետ): Դրանով նախատեսվում էր կարևորագույն երաշխիք կարգապահական պատասխանատվության ենթարկված դատավորի համար, այն է՝ «դիմել Սահմանադրական դատարան՝ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի հիման վրա»:

2. «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

17. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի¹⁹ (այսուհետ՝ ՍԴՕ) 9-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսվում է փոփոխություն (Նախագծի 1-ին հոդված), որով Սահմանադրական դատարանի (այսուհետ՝ ՍԴ) դատավորի նկատմամբ ոչ իր լիազորությունների իրականացման կապակցությամբ **քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու դեպքում** դատավորի **լիազորությունները կասեցվում են մինչև քրեական գործով վարույթի ավարտը**: Դատավորի լիազորությունների կասեցման ընթացքում դատավորը շարունակում է ստանալ իր վարձատրությունը:

Առաջարկվող փոփոխությունը խնդրահարույց է ՀՀ Սահմանադրության 164-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերի տեսանկյունից, որոնցով հստակորեն սահմանված են այն դեպքերը, երբ հնարավոր է դատավորի լիազորությունների դադարեցում: Մասնավորապես, 164-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանվում է, որ ՍԴ դատավորի լիազորությունները՝ Սահմանադրական դատարանի որոշմամբ, իսկ դատավորի լիազորությունները՝ ԲԴԽ որոշմամբ, դադարեցվում են **անհամատեղելիության պահանջները խախտելու, քաղաքական գործունեությամբ զբաղվելու, առողջական վիճակի պատճառով պաշտոնավարման անհնարինության, էական կարգապահական խախտում կատարելու դեպքերում**: Սահմանադրությունը չի նախատեսում դատավորի կողմից իր սահմանադրական գործառույթները չիրականացնելու որևէ այլ հիմք:

Առաջարկվող կարգավորումները կարող են հանգեցնել այնպիսի իրավիճակի, երբ Սահմանադրական դատարանը կաթվածահար արվի՝ դատավորների անբավարար քանակի պատճառով, քանի որ ի տարբերություն, օրինակ, առաջին ատյանի դատարանների, Սահմանադրական դատարանի պարագայում դատավորների փոխարինումն այլ դատավորներով անհնարին է:

Մեր կողմից իրականացված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քրեական հետապնդման առկայության փաստի ուժով ՍԴ դատավորի լիազորությունների «ավտոմատ կասեցման» կառուցակարգը բնորոշ ինստիտուտ չէ այլ երկրներում: Սովորաբար կասեցումը պայմանավորվում է կամ

¹⁹ Ընդունվել է 2018 թվականի հունվարի 17-ին, ՀՀՊՏ 2018.01.31/7(1365), հոդ. 74, ՀՕ-42-Ն:

Սահմանադրական դատարանի կողմից դատավորին քրեական հետապնդման ենթարկելու համաձայնություն տալով (Մոլդովա²⁰, Լատվիա²¹, Հունգարիա²², Լիտվա²³, Վրաստան²⁴) կամ կասեցման որոշումը թողնվում է Սահմանադրական դատարանի հայեցողությանը (Գերմանիա²⁵, Բելգիա²⁶):

Նման կարգավորումը առնվազն որոշակի երաշխիք է ստեղծում՝ անհիմն հետապնդումներից պաշտպանելու և դատարանի գործունեության բնականոն ընթացքը ապահովելու համար: Մինչդեռ արդարադատության նախարարության կողմից չի բերվել քննարկվող կարգավորման անհրաժեշտության որևէ հիմնավորում:

18. ՄԴՕ 9-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսվող փոփոխությունից պարզ չէ նաև, թե որ մարմինն է իրավասու քրեական հետապնդում հարուցել ՄԴ դատավորի նկատմամբ: ՄԴՕ 9-րդ հոդվածը վերաբերում է դատավորի ֆունկցիոնալ իմունիտետին, որից կարելի է եզրակացնել, որ նույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված այն կարգավորումը, որ դատավորի նկատմամբ քրեական հետապնդման հարուցման և տվյալ գործով մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատախազական հսկողություն իրականացնում է միայն գլխավոր դատախազը, վերաբերում է միայն դատավորի ֆունկցիոնալ իմունիտետի շրջանակում հարուցված քրեական հետապնդմանը: Մինչդեռ, երբ 9-րդ հոդվածի 5-րդ մասում Նախագծով ավելացվում է դատավորի կարգավիճակից չբխող գործողությունների վերաբերյալ կարգավորում, հարց է առաջանում՝ արդյո՞ք 6-րդ մասով նախատեսված դրույթները այս դեպքում արդեն տարածվում են նաև դատավորի կարգավիճակից չբխող գործողություններին: Այսինքն՝ արդյո՞ք այս

²⁰ Sbu Law N° 317-XIII on the Constitutional Court (մատչելի է հետևյալ հղումով՝ http://www.constcourt.md/public/files/file/Actele%20Curtii/acte_en/Law_on_CC_EN.pdf, այցելվել է 20.08.2019թ.), հոդ. 16, մաս 4:

²¹ Sbu Constitutional Court Law (մատչելի է հետևյալ հղումով՝ <http://www.satv.tiesa.gov.lv/en/2016/02/04/constitutional-court-law/>, այցելվել է 20.08.2019թ.), հոդված 9, մաս 1 և հոդված 35:

²² Sbu Act on the CC, (մատչելի է հետևյալ հղումով՝ <https://hunconcourt.hu/act-on-the-cc/>, այցելվել է 20.08.2019թ.), հոդված 14, մաս 3 և հոդված 50 մաս 2, կետ «da»:

²³ Sbu The law on the constitutional court of the republic of Lithuania, (մատչելի է հետևյալ հղումով՝ <https://www.lrkt.lt/en/about-the-court/legal-information/the-law-on-the-constitutional-court/193>, այցելվել է 20.08.2019թ.), հոդված 10, մաս 1:

²⁴ Sbu Organic law of Georgia on Constitutional court of Georgia (մատչելի է հետևյալ հղումով՝ <https://www.constcourt.ge/en/court/legislation/law.page>, այցելվել է 20.08.2019թ.), հոդված 15, մաս 1, 2

²⁵ Sbu Act on the Federal Constitutional Court, (մատչելի է հետևյալ հղումով՝ http://www.bundesverfassungsgericht.de/SharedDocs/Downloads/EN/Gesetze/BVerfGG.pdf?__blob=publicationFile&v=1, այցելվել է 20.08.2019թ.), հոդված 105, մաս 2, կետ 5:

²⁶ Sbu Special act of 6th January 1989 on the Constitutional court, (մատչելի է հետևյալ հղումով՝ <https://www.const-court.be/en/common/home.html>, այցելվել է 20.08.2019թ.), հոդված 49:

պարագայում ևս քրեական հետապնդման հարուցումը և մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատախազական հսկողությունը իրականացնում է միայն գլխավոր դատախազը, թե՛ քրեական հետապնդում հարուցելու և դրանով պայմանավորված՝ դատավորի լիազորությունների կասեցման համար բավարար է քրեական հետապնդման ցանկացած մարմնի որոշումը՝ դատախազ, քննիչ և հետաքննության մարմիններ:

19. Նախագծի 1-ին հոդվածով ՍԴՕ 9-րդ հոդվածի 5-րդ մասից հանվում է նաև այն կարգավորումը, որով դատավորին ազատությունից զրկած մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են ապահովել Սահմանադրական դատարանի նախագահի և մյուս անդամների անարգել մուտքն այն վայր, որտեղ պահվում է ազատությունից զրկված դատավորը, նաև ապահովել նրանց տեսակցությունը դատավորի հետ: Նախարարության կողմից չի հիմնավորվում, թե ինչո՞վ է պայմանավորված դատավորի կարգավիճակի հարցում այս հետընթացը:

20. ՍԴՕ 12-րդ հոդվածում Նախագծի 3-րդ հոդվածով ՍԴ դատավորի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերի ցանկում ավելացվել է էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցումը, և նախագծի 4-րդ հոդվածով էականորեն ընդլայնվել են այդ հիմքերը՝ հավասարեցվելով դատավորների համար նախատեսվածին: Նշենք, որ չափազանց խնդրահարույց է ՍԴ դատավորի և դատավորի համար սահմանել վարքագծի համանման կանոններ: Սահմանադրական դատարանի պարագայում խոսքը Սահմանադրության գերակայության երաշխավորի մասին է, և այս դատարանի դատավորների մասնագիտական և անձնական որակներին բոլոր երկրներում էլ, որտեղ գործում է սահմանադրական արդարադատության կենտրոնացված մոդելը, առաջադրվում են այդ դատարանի բարձր դերին համապատասխան՝ ավելի բարձր պահանջներ և չափանիշներ (դրանք արտացոլված են նաև ՀՀ Սահմանադրության 165-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումներում, ՍԴ դատավորների՝ ԱԺ կողմից ընտրության կարգում): Նշվածի համատեքստում, համոզիչ չեն նաև ՍԴՕ 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում (Նախագծի 4-րդ հոդված) արվող փոփոխությունները՝ փորձելով համահարթեցնել և ՍԴ դատավորների վրա տարածել Դատական օրենսգրքով նախատեսված դատավորի վարքագծի մանրամասն կանոնները: Այլ երկրների սահմանադրական դատարանների գործունեությունը կարգավորող ակտերի ուսումնասիրությունը նույնպես թույլ չի տալիս նման պնդումներ անել²⁷:

²⁷ Դատավորների կարգապահական պատասխանատվության հիմքերի և ընթացակարգի խնդրահարույց կողմերին արդեն իսկ անդրադարձել ենք Դատական օրենսգրքի նախագծի հետ կապված դիտարկումներում, և քանի որ առաջարկվող կարգավորումները նույնանում են, ուստի կխուսափենք կրկնությունից:

21. ՄԴՈ 82-րդ հոդվածով (Նախագծի 5-րդ հոդված) առաջարկվում է ՄԴ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն վերապահել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին²⁸: Սա ակնհայտորեն հակասում է Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասին, որով հստակ սահմանվում են, թե որ մարմինները և ինչ հարցերի կապակցությամբ իրավունք ունեն դիմելու Սահմանադրական դատարան: ՄԴ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար, ըստ 169-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի՝ իրավասու են դիմելու միայն ՄԴ առնվազն 3 դատավոր: Իսկ նույն հոդվածի 6-րդ մասով սահմանվում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով սահմանվում են դատարան դիմելու կարգի մանրամասները, որը որևէ պարագայում չի կարող նշանակել ՄԴ դիմող սուբյեկտների շրջանակի ավելացում:

22. Արդեն իսկ լայն քննարկումների տեղիք տված և խնդրահարույց կարգավորումներից է Նախագծի 7-րդ հոդվածը, համաձայն որի՝ 2019թ. օգոստոսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը հրաժարական ներկայացրած Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ, անկախ տարիքից, պահպանվում են իր հրաժարականի պահին ունեցած **աշխատավարձը**, դրա նկատմամբ սահմանված հավելավճարները և սոցիալական երաշխիքները՝ մինչև իր պաշտոնավարման տարիքը լրանալը, բացառությամբ նրա կողմից հանրային ծառայության անցնելու դեպքի: Արդարադատության նախարարությունը իր կողմից հրապարակված լրացուցիչ պարզաբանման մեջ²⁹ վերոհիշյալը ներկայացնում է որպես «դատավորների վաղ կենսաթոշակի անցնելու» մեխանիզմի ներդրում՝ որպես լավագույն օրինակ վկայակոչելով Լեհաստանը, Հունգարիան և Բելգիան: Նախ՝ պետք է բացառել նախարարության այն թյուր պնդումը, որ խոսքը այս պարագայում «կենսաթոշակի» մասին է, քանի որ կարգավորումը իրականում ՄԴ դատավորի հրաժարականի պարագայում դատավորների գործող աշխատավարձի պահպանման մասին է, ինչը նաև ուղղակիորեն արտացոլված է նորմի տեքստում: Կենսաթոշակի մասին խոսք լինել չի կարող, քանի որ Սահմանադրության 166-րդ հոդվածի 8-րդ մասը հստակորեն սահմանում է, որ ՄԴ դատավորների համար կենսաթոշակի տարիք է սահմանված 70 տարեկանը, իսկ դատավորների համար՝ 65 տարեկանը:

²⁸ Այս մասին տե՛ս նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ դիտարկումներում:

²⁹ Տե՛ս «Վաղ կենսաթոշակի անցնելու առաջարկվող կարգավորումը չի խաթարում դատական իշխանության անկախությունը. ԱՆ» (մատչելի է հետևյալ հղումով՝ <http://www.moj.am/article/2482>, այցելվել է 20.08.2019 թ.):

23. Սակայն առավել տարակուսելի են այն փաստարկներն ու երկրների փորձի վկայակոչումները, որոնք նախարարությունը բերել է իր կողմից վերը նշված լրացուցիչ հիմնավորման մեջ: Ընդ որում, նախարարության պաշտոնական կայքում սկզբնապես հրապարակված տեքստում տեղ գտած հղումները՝ օգտագործված միջազգային փաստաթղթերին և աղբյուրներին, մեկ օր անց հեռացվել են կայքից՝ թերևս փորձելով կոծկել վկայակոչվող աղբյուրներից ասվածի ճշմարտացիությունը ստուգելու հնարավորությունը, քանի որ այդ աղբյուրները ապացուցում են հակառակը:

24. Նախարարությունը չի մատնանշում, թե ինչպես իրենց կողմից որպես «վաղ կենսաթոշակային սխեմայի» թույլատրելիության ապացույց և լավագույն փորձ վկայակոչվող Հունգարիան, Լեհաստանը այդ «հաջողված փորձի» արդյունքում լրջագույն խնդիրներ են ունեցել դատական իշխանության անկախության հետ, ինչը հաստատվել է նաև ՄԻԵԴ որոշումներով՝ ընդդեմ այս երկրների, թե ինչպես բազմաթիվ քննադատություններից հետո Լեհաստանը ի վերջո ստիպված է եղել հրաժարվել դատավորների «վաղ կենսաթոշակի» գաղափարից:

25. Հունգարիայի դրական փորձի առումով նախարարությունը վկայակոչում է Եվրոպայի խորհրդի կողմից հրապարակված՝ «Դատական իշխանության անկախության և անկողմնակալության մարտահրավերները ԵԽ անդամ երկրներում» վերնագրով փաստաթուղթը³⁰: Ինչպես արդեն պարզ է դառնում փաստաթղթի անվանումից խոսքը ոչ թե դրական փորձի մասին է, այլ՝ ծախողումների: Փաստաթղթի բազմաթիվ կետերում (165, 166, 168-րդ կետեր) ներկայացվում է, թե ինչ քննադատությունների է արժանացել օրենքը, իսկ փաստաթղթի 54-րդ կետով առհասարակ սահմանվում է, որ դատավորի՝ իր պաշտոնում անփոփոխելիության միջազգայնորեն ընդունելի չափորոշիչը՝ դատավորների՝ իրենց պաշտոնում անփոփոխելիությունը և պաշտոնավարումը մինչև օրենքով սահմանված կենսաթոշակային տարիքը, տրամաբանորեն կապված է նրա անկախության հետ:

26. Նախարարության փաստարկներին տրամագծորեն հակառակ է նաև "Baka v. Hungary" գործով ՄԻԵԴ վճիռը³¹, որով գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ Հունգարիայի Գերագույն դատարանի նախագահի մանդատի վաղաժամկետ դադարեցումը տեղի է ունեցել իր մասնագիտական գործունեության ընթացքում

³⁰ Տե՛ս "Challenges for judicial independence and impartiality in the member states of the Council of Europe," SG/Inf(2016)3rev (մատչելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/168066d624>, այցելվել է 22.09.2019 թ.):

³¹ Տե՛ս Baka v. Hungary [GC] - 20261/12, Judgment 23.6.2016 [GC]:

հրապարակայնորեն արտահայտված կարծիքի համար և խախտել է ՄԻԵԿ 10 (1) հոդվածը:

27. Նախարարության ներկայացրած պարզաբանումների սին լինելուն արդեն իսկ բավական մանրամասն անդրադարձ է կատարվել «Արդարադատության նախարարությունը նենգափոխում է միջազգային լավագույն փորձը՝ դատական իշխանությանը հնազանդեցնելու նպատակով» մի հրապարակման մեջ³²: Կից հավելվածում ներկայացվում են Հունգարիայի և Լեհաստանի ձախողված փորձառության որոշ այլ ասպեկտներ:

3. «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

28. «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք)³³ 29-րդ հոդվածում (Նախագծի 2-րդ հոդված) նախատեսվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողների կողմից նվերներ ընդունելուն վերաբերող կարգավորումներ, որոնց վերաբերյալ դիտարկումներն արդեն իսկ ներկայացվել է Դատական օրենսգրքում փոփոխությունների նախագծի վերաբերյալ վերը արված դիտարկումներում:

29. Օրենքի 34-րդ հոդվածում (Նախագծի 3-րդ հոդված) առաջարկվող փոփոխության արդյունքում էականորեն ընդլայնվում է այն անձանց շրջանակը, ովքեր պարտավոր են ներկայացնել հայտարարագիր: Այսպես, գործող սահմանմամբ հայտարարագրման պարտականություն ունեն հայտարարատու պաշտոնատար անձի³⁴ ամուսինը, անչափահաս զավակը, խնամակալության կամ

³² Այս մասին առավել մանրամասն տե՛ս «Արդարադատության նախարարությունը նենգափոխում է միջազգային լավագույն փորձը դատական իշխանությանը հնազանդեցնելու նպատակով» 14 օգոստոսի 2019 թ. (մատչելի է հետևյալ հղումով՝

[³³ Ընդունվել է 2018թ. մարտի 23-ին, ՀՀՊՏ 2018.03.29/24\(1382\), հոդ. 399, ՀՕ-206-Ն:](https://pastinfo.am/hy/news/2019/08/14/Արդարադատության-նախարարությունը-նենգափոխվում-է-միջազգային-լավագույն-փորձը-դատական-իշխանությանը-հնազանդեցնելու-նպատակով/872729.այցելվել է 20.08.2019 թ.):</p>
</div>
<div data-bbox=)

³⁴ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «**հայտարարատու պաշտոնատար անձինք են՝** պետական պաշտոն զբաղեցնող անձինք, 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձինք, քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին և 2-րդ ենթախմբերի պաշտոն զբաղեցնող անձինք, արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարը, զինվորական ծառայության բարձրագույն պաշտոն զբաղեցնող անձինք, ոստիկանության, հարկային, մաքսային, քրեակատարողական և դատական

ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների գլխավոր պաշտոն զբաղեցնող անձինք»:

Պետական պաշտոնները դասակարգվում են ըստ տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական (Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մաս):

Պետական քաղաքական պաշտոններն են՝ Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների, վարչապետի, փոխվարչապետների, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի, նախարարների և նրանց տեղակալների պաշտոնները:

Համայնքային քաղաքական պաշտոններն են՝ համայնքների ղեկավարների և նրանց տեղակալների, համայնքի ավագանու անդամի պաշտոնները: (Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր):

Պետական վարչական պաշտոններն են՝ Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի, նրա տեղակալների, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի, նրա տեղակալների, վարչապետի աշխատակազմի ղեկավարի, նրա տեղակալների, Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների, պետական պահպանության ծառայության պետի և նրա տեղակալների, վարչապետի աշխատակազմի գրասենյակի ղեկավարի, մարզպետների և նրանց տեղակալների, դատական ղեկարտամենտի ղեկավարի, Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի, գլխավոր ռազմական տեսչի և նրա տեղակալի պաշտոնները:

Համայնքային վարչական պաշտոններն են՝ Երևանի, Գյումրու և Վանաձորի գլխավոր ճարտարապետների, Երևանի վարչական շրջանի ղեկավարի և նրա տեղակալի, բազմաբնակավայր համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնները (Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասեր):

Ինքնավար պաշտոններն են՝ Մարդու իրավունքների պաշտպանի, Սահմանադրական դատարանի դատավորների, անկախ պետական մարմինների անդամների, ինքնավար մարմինների անդամների, Վիճակագրական պետական խորհրդի անդամների, Վճռաբեկ, վերաքննիչ և առաջին ատյանի դատարանների դատավորների, գլխավոր դատախազի և դատախազների, քննչական մարմինների ղեկավարների և ղեկավարների տեղակալների, քննիչների, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավարի պաշտոնները (Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մաս):

Պետական հայեցողական պաշտոններ են՝ Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, փոխվարչապետների խորհրդականի, մամուլի քարտուղարի, օգնականի և ռեֆերենտի պաշտոնները, Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչների պաշտոնները, Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդականի և օգնականի պաշտոնները, Սահմանադրական դատարանի մամուլի քարտուղարի, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդականի, մամուլի քարտուղարի, օգնականի պաշտոնները, վարչապետի գլխավոր խորհրդականի պաշտոնը, հատուկ հանձնարարություններով դեսպանի պաշտոնը, նախարարների, Ազգային ժողովի նախագահի տեղակալների, գլխավոր դատախազի, Կառավարությանը, վարչապետին ենթակա պետական մարմինների ղեկավարների, անկախ պետական մարմնի, ինքնավար պետական մարմնի նախագահների, մարզպետի խորհրդականի, օգնականի պաշտոնները, գլխավոր դատախազի, նախարարի մամուլի քարտուղարի պաշտոնները, նախարարությանը ենթակա պետական մարմնի, տեսչական մարմնի ղեկավարի օգնականի պաշտոնները, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի մամուլի քարտուղարի, Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի, վարչապետի աշխատակազմի ղեկավարի, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի օգնականի, Ազգային ժողովի խմբակցության փորձագետի, Ազգային ժողովի պատգամավորի վճարովի հիմունքներով օգնականի պաշտոնները, վարչապետի ռեֆերենտների խմբի ղեկավարի պաշտոնը, վարչապետի արարողակարգի պատասխանատուի, փոխվարչապետի արարողակարգի պատասխանատուի պաշտոնները, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ղեկարտամենտի, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացման համակարգողի, Մարդու

հոգաբարձության տակ գտնվող անձը, հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ (հոդված 34, մաս 9): Մինչդեռ, 34-րդ հոդվածի 9-րդ մասի նոր խմբագրությամբ (Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետ) հայտարարագրման պարտականություն են ձեռք բերում նաև հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ չբնակվող չափահաս զավակները, հայտարարատու պաշտոնատար անձի Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ծնողը, քույրն ու եղբայրը:

30. Ավելին, Օրենքի 34-րդ հոդվածը լրացվում է 5.1 մասով, որով հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիրությամբ կապված անձինք Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով պարտավոր են մեկամսյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր: Գործող օրենքի 39-րդ հոդվածի համաձայն՝ այդպիսիք են՝ հայտարարատու պաշտոնատար անձի ամուսինը, ծնողը, զավակը, եղբայրը, քույրը, ամուսնու ծնողը, զավակը, եղբայրը և քույրը: Ընդ որում, Հանձնաժողովին տրված է իրավիճակային հայտարարագիր պահանջելու լայն և որևէ կերպ չպատճառաբանված հայեցողություն, որը լուրջ հարցադրումներ է առաջացնում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի տեսանկյունից (Սահմանադրության հոդված 79): Պարզ չէ, թե ի՞նչ հանգամանքներից ելնելով, ո՞ր դեպքերում է Հանձնաժողովը իրավասու լինելու նման իրավիճակային հայտարարագիր պահանջելու՝ անձի համար առաջացնելով զգալի պարտավորություններ: Նախագծով առաջարկվող կարգավորումները լուրջ հարցերն են առաջացնում առնվազն մարդու մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքին (Սահմանադրության 31 հոդված) միջամտության իրավաչափության, այս իրավունքի սահմանափակումների համաչափության տեսանկյունից: Հարցեր են առաջանում իրավիճակային հայտարարագրի բնույթի հետ, մասնավորապես՝ անհասկանալի է,

իրավունքների պաշտպանի աշխատակազմի մարզային ստորաբաժանման ղեկավարի, Մարդու իրավունքների պաշտպանի խորհրդականի, օգնականի և մամուլի քարտուղարի պաշտոնները, գլխավոր դատախազի տեղակալի, նախարարի տեղակալի, Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա պետական մարմինների ղեկավարների տեղակալների, անկախ պետական մարմնի նախագահի տեղակալի, ինքնավար մարմնի նախագահի տեղակալի, մարզպետի տեղակալի օգնականի պաշտոնները և անկախ պետական մարմնի, ինքնավար մարմնի անդամի օգնականի պաշտոնները:

Համայնքային հայեցողական պաշտոններն են՝ համայնքի ղեկավարի խորհրդականի, մամուլի քարտուղարի, օգնականի, համայնքների ղեկավարի տեղակալի օգնականի, Երևանի, Գյումրու և Վանաձորի գլխավոր ճարտարապետների օգնականի, համայնքների ավագանու խմբակցությունների փորձագետների պաշտոնները (Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր):

թե ի՞նչ տեղեկություններ պետք է ներառվեն հայտարարագրերի մեջ, և թե ի՞նչ ընթացակարգով են ներկայացվելու Հանձնաժողովին: Հարց է նաև, թե ինչպե՞ս, ինչի՞ հետ համադրելով և համեմատելով է Հանձնաժողովը գնահատելու իրավիճակային հայտարարագրերը, եթե նախկինում համապատասխան անձի կողմից ներկայացված չեն եղել այլ հայտարարագրեր, քանի որ վերջիններս հայտարարագրման ընդհանուր պարտականություն չունեն (օրինակ՝ խնամիությանը կապված անձանց պարագայում)³⁵: Հարց է նաև, թե արդյո՞ք անձը կարող է բողոքարկել իրավիճակային հայտարարագիր պահանջելու վերաբերյալ Հանձնաժողովի այդ որոշումը: Իրավիճակային հայտարարագիր պահանջելիս հաշվի չի առնվում, թե արդյոք իրականում պաշտոնատար անձի և տվյալ անձի մեջ առկա՞ են հարաբերություններ, շփում, թե՞ ոչ: Մինչդեռ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով հայտարարագիր ներկայացնելը Նախագծերի փաթեթի համաձայն առաջացնում է վարչական կամ քրեական պատասխանատվություն³⁶:

31. Ավելին, «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում նախագծերի փաթեթով առաջարկվող փոփոխություններով էլ հայտարարատու անձանց շրջանակի այս ընդլայնումը բերում է նաև վերջիններիս բանկային տվյալների մատչելիության՝ ընդամենը Հանձնաժողովի պահանջի հիման³⁷:

4. «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

32. Կոռուպցիայի դեմ պայքարի հանձնաժողովի նման հանձնաժողովների գործնական անկախությունը մեծապես կախված է դրա անդամների հեղինակությունից և անցած մասնագիտական ուղուց: Այս առումով անհասկանալի են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) անդամին ներկայացվող պահանջների մի շարք փոփոխությունները, որոնք Նախագծով առաջարկվում են «Կոռուպցիայի

³⁵ Ինչպես արդեն նշվել է դատավորների թեկնածուների մասով այս հացրին անդրադառնալիս, «Հանրային ծառայության մասին» օրենքը նախատեսում է հայտարարագրման երեք տեսակ՝ 1) պաշտոնը ստանձնելիս, 2) պաշտոնավարման ընթացքում (տարեկան հայտարարագրեր) և 3) պաշտոնավարումը դադարեցնելիս (հոդված 34, մաս 4): Այս մեխանիզմի իմաստն այն է, որ Հանձնաժողովը կարողանա գնահատել հանրային ծառայողի գույքի փոփոխությունը նրա պաշտոնավարման ողջ ընթացքում:

³⁶ Տե՛ս Նախագծերի փաթեթում ընգրկված համապատասխան օրենսգրքերում փոփոխությունները:

³⁷ Այս մասին տե՛ս նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով և «Բանկային գաղտնիքի մասին» օրենքի նախագծով առաջարկվող փոփոխությունների համատեքստում:

կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածում (Նախագծի 1-ին հոդված):

33. Մասնավորապես, Օրենքի վերաշարադրված 10-րդ հոդվածի 1-ին մասում (Նախագծի 1-ին հոդված, 1-ին մաս) Հանձնաժողովի անդամի համար սահմանվում է հինգ տարվա աշխատանքային ստաժ ունենալու պահանջ, որից առնվազն երեքը՝ ղեկավար պաշտոններում: Գործող կարգավորումներով ստաժին ներկայացվում են ավելի խիստ պահանջներ՝ առնվազն տասը տարվա, ընդ որում՝ մասնագիտական աշխատանքային ստաժ: Առաջարկվող փոփոխությամբ հանվում է ստաժի՝ մասնագիտական լինելու պահանջը:

34. Գործող Օրենքը, ըստ էության, հավասարեցրել է Հանձնաժողովի անդամին ներկայացվող պահանջները պատգամավորի համար Սահմանադրությամբ սահմանված պահանջներին: Մինչդեռ այս հավասարեցումը հանելով Օրենքի վերաշարադրված 10-րդ հոդվածի 1-ին մասով (Նախագծի 1-ին հոդված, 1-ին մաս)՝ Հանձնաժողովի անդամի տարիքային շեմը 25-ից իջեցվել է 18-ի: Ըստ այդմ, Նախագծի կարգավորումներով հանվել են նաև Հանձնաժողովի անդամի նստակեցության ցենզին վերաբերող պահանջները, որոնք Սահմանադրության 48-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրվում են պատգամավորի համար:

35. Հաշվի առնելով Հանձնաժողովի կարևոր առաքելությունը՝ Օրենքով որպես գնահատողական չափանիշ է սահմանվում Հանձնաժողովի անդամի թեկնածուի համար ճանաչում ունենալու պահանջը, որը ևս հանվում է Նախագծով:

36. Փոխարենը՝ Նախագծով նախատեսվում է նոր պահանջ՝ ղեկավար պաշտոններում փորձառությունը: Փաստորեն, մի կողմից՝ Հանձնաժողովի անդամին ներկայացվող պահանջները մեղմացվում են (ինչը չի խոսում այս մարմնի պրոֆեսիոնալիզմի բարձրացման մասին), մյուս կողմից՝ առաջադրվում են այնպիսի պահանջներ, որոնց հիմնավորվածությունը անհասկանալի է, քանի որ Հանձնաժողովը հիմնականում իրականացնելու է մշտադիտարկման գործառույթներ, որոնք չեն պահանջում օպերատիվ կառավարման հմտություններ, հետևաբար նաև՝ ղեկավար աշխատանքի փորձառություն:

37. Նույնքան անհասկանալի է Օրենքի վերաշարադրված 10-րդ հոդվածի 2-րդ մասի (Նախագծի 1-ին հոդված) պահանջն առ այն, որ Հանձնաժողովի անդամներից մեկը պետք է լինի իրավաբան, մյուսը՝ տնտեսագետ: Հաշվի առնելով Հանձնաժողովի գործառույթների առանձնահատկությունները՝ գուցե աուդիտորակա՞ն աշխատանքի փորձ ունենալու պահանջը առավել նպատակահարմար լիներ: Միաժամանակ, Նախագիծը չի մանրամասնում, թե Հանձնաժողովի անդամ նշանակող մի քանի սուբյեկտներից ինչպե՞ս են որոշելու, թե ով՝ ինչ մասնագիտացման թեկնածու պետք է նշանակի:

38. Հաջորդ խնդիրը կապված է Հանձնաժողովի նախագահ ընտրելու/նշանակելու ընթացակարգի հետ. փոփոխվող 10-րդ հոդվածի 4-րդ մասի բովանդակությունից բխում է (Նախագծի 1-ին հոդված), որ Հանձնաժողովի նախագահը պետք է **նշանակվի**, սակայն Նախագիծը հետագա դրույթներում չի մանրամասնում նշանակման ընթացակարգը: Գործող Օրենքով (հոդված 10, մաս 2) նախատեսված է, որ Հանձնաժողովն իր կազմից ընտրում է Հանձնաժողովի նախագահ՝ անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Միջազգային փորձը հուշում է ձեռնպահ մնալ մեկ քաղաքական մարմնի կողմից հակակոռուպցիոն մարմնի ղեկավարին ընտրելուց³⁸՝ ապահովելով անաչառ ընտրության գործընթաց իշխանության տարբեր ճյուղերի միջև բարձր մակարդակի կոնսենսուսի հիման վրա: Այս համատեքստում նպատակահարմար է պահպանել գործող կարգավորումը, ինչը Հանձնաժողովի անկախության լրացուցիչ գրավական կլինի:

39. Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի նոր խմբագրությամբ (Նախագծի 2-րդ հոդված) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորման համար ստեղծվող Մրցութային խորհրդի կազմից դուրս են մնում Սահմանադրական դատարանը, Հանրային խորհուրդը, Փաստաբանների պալատը: Նշվածի համատեքստում անհրաժեշտ է փաստել, որ օրենքի գործող տարբերակով նախատեսված ընթացակարգը հնարավորություն էր ընձեռնում Հանձնաժողովը ձևավորել բազմակարծության սկզբունքի հիման վրա: Միջազգային փաստաթղթերը կարևորում են «անկախության բավարար մակարդակի» ապահովումը, քանի որ առանց նման անկախության այս մարմինների գործունեությունը չի կարող արդյունավետ լինել:

40. Առավել ուշագրավ է այն հանգամանքը, որ Օրենքի 42-րդ հոդվածում առաջարկվող փոփոխությամբ (Նախագծի 9-րդ հոդված) Հանձնաժողովի առաջին կազմի համար, առանց որևէ հիմնավորման, շրջանցվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը Մրցութային խորհրդի միջոցով ձևավորելու՝ Օրենքի 12-15-րդ հոդվածներով նախատեսված ընթացակարգը՝ այն հետաձգելով մինչև 2021 թվականը:

41. Փոխարենը՝ Հանձնաժողովի առաջին կազմի ձևավորումը թողնվում է Ազգային ժողովին, իսկ առաջադրող սուբյեկտների շարքում, բացի Ազգային ժողովի խմբակցություններից և ԲԴԽ-ից, ավելացվում է նաև Կառավարությունը և դուրս է մնում Մարդու իրավունքների պաշտպանը: Փաստորեն, հակառակ գործող Օրենքի կարգավորումների, Նախագծով, ըստ էության, տեղի է ունենում

³⁸ OECD, Specialized anti-corruption institutions. Review of models. Anti-corruption network for Eastern-europe and Central Asia, 2008, էջ 26-27, Զակարտայի սկզբունքների արձանագրություն հակակոռուպցիոն մարմինների համար, Զակարտա 26-27 նոյեմբերի 2012, էջ 2:

Հանձնաժողովի ձևավորման կենտրոնացում հիմնականում մեկ քաղաքական ուժի ձեռքում, որն առաջադրում, ապա նշանակում է 5 հոգուց բաղկացած Հանձնաժողովի անդամներից առնվազն 3-ին: Դա բացատրվում է նրանով, որ խորհրդարանական կառավարման ձև ունեցող այնպիսի երկրում, ինչպիսին Հայաստանն է, կառավարությունը կազմող քաղաքական ուժն ու խորհրդարանական մեծամասնությունները նույնանում են, իսկ ներկայիս գումարման Ազգային ժողովում քաղաքական մեծամասնությունն ունի ծայրահեղ մեծ ներկայացվածություն: Այս համատեքստում ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Սահմանադրության 122-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ինքնավար մարմինների անդամները նշանակվում են պատգամավորների ընդհանուր թվի ծայների մեծամասնությամբ («Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի 146-րդ հոդված): Նման պարագայում իրավիճակը չի փրկվում նրանով, որ Կառավարությունը կամ Ազգային ժողովի կառավարող կուսակցությունները միայն առաջադրման գործառույթ են իրականացնում, իսկ վերջնական ընտրությունը վերապահված է Ազգային ժողովին: Համեմատության համար, օրինակ, նույն Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի դատավորների պարագայում դատավորների ընտրության համար նախատեսված է շատ ավելի բարձր շեմ՝ պատգամավորների առնվազն 3/5-րդ ծայների քանակ:

42. Նման պայմաններում ակնհայտ կասկածներ են առաջանում Հանձնաժողովի անդամների քաղաքական կախվածության առումով: Հատկապես հաշվի առնելով մասնավոր և ընտանեկան կյանքին միջամտող այն ընդարձակ և լայն հայեցողություն պարունակող գործառույթները, որոնք Նախագծերի փաթեթով վերապահվում են Հանձնաժողովին՝ Հանձնաժողովի ձևավորման ընթացակարգի նման փոփոխությունը մեծ կասկածների տեղիք է տալիս Նախագծով առաջարկվող կարգավորումների իրական նպատակների վերաբերյալ: Հանձնաժողովի անդամների ընտրությունը այս պայմաններում չի կարող հանրության կողմից ընկալվել որպես առանց միջամտությունների և անաչառ իրականացված:

43. Ուժը կորցրած են ճանաչվում Օրենքի 13-րդ հոդվածի 12-24-րդ մասերը (Նախագծի 4-րդ հոդվածով), որոնք նվիրված են մրցույթի անցկացման ընթացակարգին: Օրենքի գործող տարբերակում տվյալ կետերի ներառումը ինքնանպատակ չէր և միտված էր անդամների ընտրության ընթացակարգը դարձնելու հնարավորինս թափանցիկ և հնարավոր շահարկումներից զերծ: Գործող կարգավորումների պահպանման դեպքում հնարավոր կլինի հետագայում խուսափել մրցույթի անցկացման օրինականության վերաբերյալ հնարավոր շահարկումներից:

44. Նախագծի 5-րդ հոդվածով նախատեսվում է Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 6-րդ և 7-րդ կետերով: Նշված կետերից բխում է, որ

Հանձնաժողովի գործառույթների մեջ է մտցվում պետական պաշտոնների նշանակման ենթակա անձանց, դատավորների և դատավորների թեկնածուների բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացություններ ներկայացնելը, որոնք **ենթակա չեն հրապարակման**: Առաջին հայացքից հետաքրքրական թվացող այս գործառույթների տակ թաքնված են մի շարք խութեր: Նախ՝ ի՞նչ է բարեվարքությունը: Համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի բարեվարքության համակարգը ներառում է «հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները (այդ թվում՝ պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ), անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումներ և շահերի բախումը» (հոդված 21): «Հանրային ծառայության մասին» օրենքը, բարեվարքության նկատմամբ վերահսկողության հարցերում Հանձնաժողովի իրավասությունները սահմանելիս, վերապահումներ է կատարել պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի համար, որոնց մասով համապատասխան գործառույթների իրականացումը իրավացիորեն վերապահվել էր համապատասխան մարմինների ներսում գործող կամ հատուկ ստեղծված այլ մարմինների (պատգամավորական էթիկային առնչվող հարցերի քննարկման համար ժամանակավոր հանձնաժողով, Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ձևավորվող Կարգապահական հարցերի հանձնաժողով, Բարձրագույն դատական խորհուրդ, դատախազության էթիկայի հանձնաժողով): Նման մոտեցումը, օրինակ՝ պատգամավորի պարագայում կամ դատավորների պարագայում, բխում է իշխանությունների բաժանման սկզբունքի և այդ մարմինների անկախության ապահովման երաշխիքների անհրաժեշտությունից: Նախագծով Հանձնաժողովին նույն ոլորտում համապատասխան գործառույթների վերապահումը՝ առանց համապատասխան օրենքներում արդեն իսկ այլ մարմիններին վերապահված նույնական գործառույթների հետ դրանց համադրման, ստեղծում է գործառույթների կրկնօրինակման, մեկ այլ մարմնի գործառույթների դաշտ ներխուժելու վտանգ:

45. Միաժամանակ, սահմանված չէ նաև այդ գործառույթի իրականացման գործիքակազմը: Ի՞նչ է նշանակում «ուսումնասիրությունների իրականացում» գործառույթը, ինչպե՞ս, ի՞նչ ծավալով են իրականացվելու այդ ուսումնասիրությունները և դրանց շրջանակում ի՞նչ բնույթի տեղեկատվություն իրավունք ունի այլ մարմիններից պահանջելու և ստանալու Հանձնաժողովը: Պետք նաև ընդգծել, որ չնայած պետական պաշտոն զբաղեցնող անձիք, իրենց պաշտոնի բնույթով պայմանավորված, ենթարկվում են հանրային վերահսկողության և թափանցիկության առավել խիստ ստանդարտների և դրա արդյունքում առավել

նվազ պաշտպանված են մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի շրջանակներում, այդուհանդերձ տարբեր մարմինների՝ անձի մասնավոր ոլորտ ներխուժելու հարցերում լայն և չկարգավորված գործառույթների վերապահումը կարող է ընդհանրապես խարխլել հանրային ծառայության համակարգը՝ չափազանց խոցելի դարձնելով դրանում ներգրավված անձանց սահմանադրական հիմնական իրավունքների պաշտպանությունը: Հանձնաժողովի բոլոր գործառույթները մանրակրկիտ կարգավորման են ենթարկված գործող օրենքում՝ բացառելու համար կամայականությունները: Մինչդեռ այս կասկածելի գործիքակազմը, որը խիստ թերի է կարգավորված Նախագծով, ստեղծում է դրա չարաշահման մեծ վտանգներ:

46. Նախագծով նախատեսվող դատավորների կամ թեկնածուների բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունների ներկայացման գործառույթը առաջացնում է սահմանադրական կարգավորումների հետ կապված խնդիրներ: Դատական իշխանության անկախության միջազգային չափանիշներին համահունչ՝ ՀՀ Սահմանադրությունը նախատեսել է հատուկ մարմին՝ Բարձրագույն դատական խորհուրդ, որին վերապահվել են դատական իշխանության կազմակերպման և գործունեության հարցերում կարևորագույն լիազորություններ, այդ թվում՝ դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորությունը՝ բարեվարքության կանոնների խախտման համար: Նման մարմնի նախատեսումը սահմանադրական մակարդակով պայմանավորված է դատական իշխանության անկախության ապահովման գործառույթներով, որոնց արդյունավետ իրականացման համար ԲԴԽ-ն ունի կազմավորման հատուկ կարգ և անկախության երաշխիքներ: Նման պարագայում, իր լիազորությունների բնույթով և գործառույթների առումով լինելով գործադիր իշխանության մարմին, Հանձնաժողովին դատավորների բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ ներկայացնելու իրավասության վերապահումը, լուրջ հարցադրումներ և մտահոգություններ է առաջացնում սահմանադրականության, իշխանությունների բաժանման, դատական իշխանության անկախության տեսանկյունից:

47. Ուշագրավ և մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ Նախագծով պետական պաշտոններ զբաղեցնող անձանց, դատավորների և դատավորների թեկնածուների վերաբերյալ ներկայացվող բարեվարքության եզրակացությունները «ենթակա չեն հրապարակման»: Մեր օրենսդրությունը վաղուց հրաժարվել է նման կոնֆիդենցիալ զեկույցների պրակտիկայից և դրանց օգտագործումից, քանի որ դրանք անձին զրկում են դրանցից պաշտպանվելու հնարավորություններից³⁹,

³⁹ Այս մասով տե՛ս նաև ՄԻԵԴ Turek v. Slovakia, application No 57986/00, Strasbourg 14.02.2006 զձը, կետ 115-116:

կարող են հանգեցնել հանրային ծառայության անցնելու սահմանադրական իրավունքի սահմանափակման (Սահմանադրության հոդված 49):

48. Նախագծի 7-րդ հոդվածով, ի թիվս այլնի, նախատեսվում է Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասը վերաշարադրել՝ սահմանելով, որ Հանձնաժողովը իրավասու է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ անձանցից պահանջելու և ստանալու (այդ թվում՝ էլեկտրոնային հարցման եղանակով) հայտարարատու անձանց *անհշվող* տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ **բանկային, առևտրային, ապահովագրական գաղտնիք պարունակող**: «*Անհշվող տեղեկություններ*» արտահայտությունը գործնականում տարածական մեկնաբանության տեղիք կարող է տալ, և պարզ չէ՝ արդյո՞ք դա սահմանափակվելու է միայն հայտարարատու պաշտոնատար անձով, թե կարող է ընդգրկել անձանց անորոշ և լայն շրջանակ: Ասվածը առավել ակնբախ է դառնում, երբ խնդիրը դիտարկում ենք Նախագծերի փաթեթում ընդգրկված «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերում առաջարկվող փոփոխությունների համատեքստում, որոնցից հանվում են տեղեկությունները ստանալը անձանց որոշակի շրջանակով և օրենքների որոշակի պահանջներով պայմանավորելու կարգավորումները, որոնք զսպաշապիկի դեր էին կատարում: Փոխարենը՝ նշված օրենքների փոփոխություններով նախատեսվում է Հանձնաժողովի պահանջով՝ Հանձնաժողովի կողմից «*իր գործառույթներն իրականացնելու կապակցությամբ*» տեղեկություն տրամադրելու անվերապահ հիմք:

49. Նախագծի 7-րդ հոդվածով նախատեսվում է Օրենքի 25-րդ հոդվածը լրացնել նաև 2.1-ին մասով, որը, մասնավորապես, նախատեսում է Հանձնաժողովին իրավասություն վերապահել հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանցից պահանջելու ներկայացնել գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր: Իրավիճակային հայտարարագրերի խնդրահարույց լինելու մասին արդեն իսկ խոսվել է վերը՝ «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխությունների նախագծի վերաբերյալ դիտարկումներում:

50. Նախագծի 7-րդ հոդվածով նախատեսվում է Օրենքի 25-րդ հոդվածը լրացնել 9.2-րդ մասով, ըստ որի՝ Հանձնաժողովը իրավասու է նյութերն ուղարկել Սահմանադրական դատարան՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցի քննարկման առաջարկությամբ: Նշված փոփոխության իմաստը, համադրելով

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասում համապատասխան նախագծով կատարված համապատասխան փոփոխությանն հետ⁴⁰, պարզ չէ:

5. «ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

51. «Բանկային գաղտնիքի մասին» օրենքի⁴¹ (այսուհետ՝ Օրենք) 13.4-րդ հոդվածում Նախագծով առաջարկվող փոփոխությամբ զգալիորեն թուլացվում է բանկային գաղտնիքի պաշտպանությունը: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, փաստորեն, իրավունք է վերապահվում դիմելու և բանկերից ստանալու հայտարարատու հանրային ծառայողների, նրանց հետ մերձավոր ազգակցական և խնամիական կապի մեջ գտնվող լայն շրջանակի անձանց վերաբերյալ տեղեկատվություն⁴², որի տրամադրումը բանկերի կողմից բանկային գաղտնիքի հրապարակում չի համարվում: Գործող օրենքի կարգավորումներով նման տեղեկատվության ձեռքբերում հանձնաժողովի կողմից հնարավոր է միայն հայտարարատու պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց վերաբերյալ՝ նրանց համաձայնությամբ:

52. Այլ մարմինների պարագայում Օրենքը բանկային գաղտնիքի պաշտպանության բավական խիստ մեխանիզմներ է նախատեսում: Այսպես, օրինակ, բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրվում են *միայն դատարանի որոշման հիման վրա* և միայն քրեական գործով *կասկածյալ կամ մեղադրյալ* ներգրավված անձանց վերաբերյալ («Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենք, հոդված 10):

53. Բանկային գաղտնիքի ինստիտուտի կարևորությունը հաշվի առնելով՝ մտահոգիչ է արդարադատության նախարարության կողմից առաջարկվող՝ բերվող փաստարկների բովանդակությունը: Այսպես, արդարադատության նախարարությունը հղում է կատարում ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների գնահատման ծրագրի 3-րդ փուլի՝ Հայաստանի վերաբերյալ զեկույցին, որտեղ ՏՀԶԿ-ն առաջարկել է ուսումնասիրել, թե որքանով է արդյունավետ գործում բանկային գաղտնիքի նկատմամբ մուտք ստանալու կառուցակարգը:⁴³ Նշված

⁴⁰ Այս մասին արդեն իսկ խոսվել է համապատասխան նախագծի վերաբերյալ դիտարկումներում:

⁴¹ Ընդունվել է 1996թ. հոկտեմբերի 7-ին, ՀՀԱԺՏ 1996.10.15/19(1119), հոդ. 230, ՀՕ-80:

⁴² Այս մասին առավել մանրամասն տե՛ս «Հանրային ծառայության մասին» օրենքի նախագծի վերաբերյալ դիտարկումներում:

⁴³ Տե՛ս OECD Anti-corruption network for eastern Europe and Central Asia, Anti-corruption reforms in Armenia, Round 3 Monitoring of the Istanbul Anti-Corruption Action Plan, 2014, էջ 39:

փաստարկի բովանդակային թերությունն այն է, որ ՏՀԶԿ-ի զեկույցում տեղ գտած ձևակերպումները վերաբերում են հետաքննություն իրականացնող մարմիններին⁴⁴, իսկ Հանձնաժողովը չի կարող համարվել այդպիսին: Նախարարության հաջորդ փաստարկը հիմնված է մի քանի երկրների օրինակների ներկայացման վրա: Մասնավորապես՝ բերվում են Բուլղարիայի, Էստոնիայի, Իսպանիայի և Պորտուգալիայի օրինակները, սակայն չի ներկայացվում որևէ վերլուծություն առ այն, թե արդյո՞ք նշված կարգավորումների ներմուծումից հետո գրանցվել է դրական փոփոխություն այդ երկրներում, և եթե գրանցվել է, արդյո՞ք դրական փոփոխությունները պատճառահետևանքային կապի մեջ են գտնվում բանկային գաղտնիքի պաշտպանության թուլացման հետ:

54. Մեկ այլ անդրադարձ պահանջող խնդիր է բանկային գաղտնիքի պահպանման ռեժիմի թուլացման հնարավոր անդրադարձը Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի գրավչության և հետագա զարգացման վրա: Նշված խնդիրներից խուսափելու նպատակով նախարարությունը պետք է իրականացներ նորմատիվ իրավական ակտի նախագծի կարգավորման ազդեցության գնահատում, ինչը նախատեսված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով⁴⁵:

6. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

55. Դատական օրենսգրքում Նախագծով նախատեսվող փոփոխությունները հակահամակարգային են, դատավորների անկախության և ինքնակառավարման հարցերում նախատեսում են հետընթաց՝ գործող կարգավորումների համեմատ: Տպավորություն է ստեղծվում, թե առաջարկվող փոփոխությունների հիմնական նպատակը դատավորի գործունեությանը միջամտության թաքնված հնարավորությունների ստեղծումն ու արտաքին միջամտություններից պաշտպանվածության թուլացումն է՝ դատավորների կարգապահական պատասխանատվության ինստիտուտի բարեփոխման անվան տակ: Նախագծով առաջարկվող կարգավորումները նշանակալիորեն ընդլայնում են էական կարգապահական խախտում հանդիսացող արարքների շրջանակը՝ դրանով իսկ ընդլայնելով դատավորի լիազորությունները դադարեցնելու հիմքերը, նախատեսում են Սահմանադրության տեսանկյունից խնդրահարույց կարգապահական պատասխանատվության գործընթաց և սանկցիաների շրջանակ:

⁴⁴ Տե՛ս նույն տեղում:

⁴⁵ Ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2018 թ. մարտի 21-ին, ՀՀՊՏ 2018.03.28/23(1381), հոդ. 373:

56. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում նախատեսվող փոփոխությունները ոչ այլ ինչ են, քան «քաղաքակիրթ» ճանապարհով Սահմանադրական դատարանի գործող դատավորներից ազատվելուն և քաղաքական նշանակության զգայուն հարցեր քննող այս դատարանը իշխանության քիմքին հարմարեցնելու միջոց:

57. Նախագծով առաջարկվող Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների կասեցման նորամուծությունը հակասահմանադրական է և պարունակում է դատավորներին ճնշման տակ պահելու, դատարանը կաթվածահար անելու մեծ ռիսկեր: Դատավորների կարգապահական վարույթի կարգավորումները ուղղված են Սահմանադրական դատարանի դատավորի իրավական պաշտպանվածության և իր պաշտոնում պաշտոնավարելու անվտանգության նշանակալի թուլացմանը, ինչը գործնականում կարող է օգտագործվել «հարմար» առիթներով:

58. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններով Հանձնաժողովին վերապահվում են նոր գործառույթներ, երբ մի կողմից՝ հստակ սահմանված չէ դրանց իրականացման գործիքակազմը, իսկ մյուս կողմից՝ առկա է մեկ այլ մարմնի գործառույթների դաշտ ներխուժելու վտանգ: Հանձնաժողովի անդամներին ներկայացվող պահանջները մի դեպքում առավել մեղմացվել են՝ իջեցնելով նման մարմնում ներկայացված անձանց մասնագիտական և անձնական որակներին ներկայացվող խիստ պահանջները, մյուս դեպքում սահմանվել են այնպիսի պահանջներ, որոնք հիմնավորված և հասկանալի չեն (ղեկավար պաշտոններում ներգրավվածություն, տնտեսագետի մասնագիտություն): Թափանցիկության, ներկայացուցչականության, քաղաքական կախվածության բացառման և անկախության տեսանկյունից խիստ խնդրահարույց է Հանձնաժողովի կազմավորման նախատեսվող ընթացակարգը, որտեղ նահանջ է կատարվել գործող օրենքով նախատեսված մրցութային ընթացակարգից:

59. Այս ամենը խիստ մտահոգիչ է «Հանրային ծառայության մասին» օրենքի փոփոխություններով Հանձնաժողովին վերապահվող լայն իրավասությունների, հայտարարագրման գործընթացում անձանց անորոշ շրջանակի մասնավոր և ընտանեկան կյանքին միջամտելու, բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններ ստանալու հիմքեր նախատեսող կարգավորումների համատեքստում:

60. Բանկային գաղտնիքի պաշտպանության էական թուլացումը և անձանց բանկային տվյալների մատչելիությունը լուրջ հարցադրումներ է առաջացնում բանկային համակարգի վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից, որոնք Նախագծերի փաթեթում գնահատված չեն:

61. Նախագծերի փաթեթով նախատեսվող փոփոխությունները պարունակում են Սահմանադրությանը հակասող կարգավորումներ, հաճախ թերի կիսակարգավորումներ են, որոնք չեն համապատասխանում այն նպատակներին, որոնք մատնանշվում են արդարադատության նախարարության կողմից նախագծերի փաթեթում բերվող հիմնավորումներում:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՎԱՂ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՍԽԵՄԱՅԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՀՈՒՆԳԱՐԻԱՅՈՒՄ

Լեհաստան

62. Լեհաստանի իշխանությունները 2017թ. հայտարարեցին դատական իշխանության համակարգային բարեփոխումների մասին: Այդ բարեփոխումներին ուղղված առաջին քայլը խորհրդարանի կողմից ընդունված 3 օրենքների նախագծերն էին՝ առաջին ատյանի դատարանների (the Draft Act on Ordinary Courts), Դատական խորհրդի (the Draft Act on the National Council of the Judiciary) և Գերագույն դատարանի (այսուհետ՝ ԳԴ) (the Draft Act on the Supreme Court) վերաբերյալ:

63. 2017թ. հուլիսին խորհրդարանական իշխող ուժը ներկայացրեց ԳԴ մասին օրենքի նախագիծը: Նախագծի բազմաթիվ խնդրահարույց կետերից մեկն այն էր, որ նախագծի ուժի մեջ մտնելուն պես ԳԴ բոլոր դատավորները **պետք է պարտադրված հրաժարական ներկայացնեին**, բացառությամբ արդարադատության նախարարի կողմից նշանակվածների: Նախագիծը արդարադատության նախարարին լիազորում էր նշանակել ԳԴ ժամանակավոր նախագահ և Դատական խորհրդի ընտրությանը ներկայացնել դատավորների նոր թեկնածուներին: Նախագծի հեղինակները ԳԴ ամբողջ կազմի փոփոխությունը հիմնավորում էին Լեհաստանի Սահմանադրության 180-րդ հոդվածի 5-րդ մասով⁴⁶, համաձայն որի՝ դատական համակարգի վերակազմակերպման կամ վարչատարածքային իրավազորության փոփոխության դեպքում դատավորը կարող է տեղափոխվել այլ դատարան կամ անցնել թոշակի իր ամբողջական վարձատրության պահպանման պայմանով: Նախագծով միաժամանակ նախատեսվում էր ԳԴ դատավորների կենսաթոշակային տարիքը 70 տարեկանից իջեցնել 65 տարեկանի:

64. 2017թ. հուլիսի վերջին երկրի նախագահը վետո դրեց նախագծի վրա՝ այդպիսով կասեցնելով դրա հետագա գործողությունը: Նախագահին իր որոշումը պատճառաբանում էր նրանով, որ նախագծով արդարադատության նախարարին վերապահվում էր չափազանց մեծ լիազորություններ՝ կապված դատական իշխանության հետ:

65. 2017թ. սեպտեմբերին Լեհաստանի նախագահը խորհրդարանին ներկայացրեց ԳԴ մասին օրենքի սեփական նախագիծը, որի էական տարբերությունները նախորդի հետ կայանում էին հետևյալում՝

⁴⁶ St' u The Constitution of the republic of Poland, մատչելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.sejm.gov.pl/prawo/konst/angielski/kon1.htm>:

- փոփոխությունների մի մասը կապված էր ԳԴ նոր ստեղծվող պալատների հետ, ինչը հետաքրքրական չէ տվյալ վերլուծության տեսանկյունից,
- ի տարբերություն նախորդի՝ նոր նախագծով պետք է **հրաժարական տային (անցնեին վաղաժամկետ թոշակի) միայն 65 տարեկանը լրացած** դատավորները. այս կարգավորումը տարածվում էր ԳԴ 72 դատավորներից շուրջ 27-ի, ինչպես նաև ԳԴ նախագահի վրա,

- նախագծի այս տարբերակով արդարադատության նախարարի փոխարեն 65 տարեկանը լրացած դատավորներին որոշակի ժամկետով պաշտոնավարելը շարունակելու թույլտվություն կարող էր տրվել նախագահի կողմից:

66. Նախագահի ներկայացրած օրենքի նախագիծը 2018թ. ապրիլին մտավ ուժի մեջ: Օրենքը ենթարկվեց բազմաթիվ սուր քննադատությունների՝ ինչպես Լեհաստանում, այնպես էլ Եվրոպական միության տարբեր կառույցների կողմից:

67. Եվրոպական հանձնաժողովը 2017թ. դեկտեմբերին տարածեց մամուլի հաղորդագրություն⁴⁷ Եվրոպայի խորհրդին կոչ անելով Լեհաստանի նկատմամբ կիրառել Եվրոպական միության պայմանագրի 7-րդ կետը⁴⁸: Այդ կետը կիրառվում է այն դեպքում, երբ անդամ երկրի կողմից առկա է լուրջ իրավախախտում և իրավախախտման չվերացվելու դեպքում անգամ հնարավոր է անդամ երկրի լիազորությունների և քվեարկության իրավունքի կասեցում՝ մինչև մատնանշված իրավախախտումների վերացնելը: Տարածված հայտարարության մեջ նշվում էր՝ հանձնաժողովը եկել է այն եզրակացության, որ Լեհաստանում կա օրենքի գերակայության խախտման շատ լուրջ վտանգ, ինչպես նաև իրականացված բարեփոխումների արդյունքում դատական իշխանությունը գտնվում է իշխող քաղաքական ուժի ազդեցության ներքո: Օրենքի գերակայությունը պահպանելու համար հանձնաժողովը որպես հաջորդ քայլ դիմելու էր Եվրոպական միության դատարան: 2018թ. ԵՄ դատարան դիմելու որոշում էր կայացրել⁴⁹ նաև Լեհաստանի Գերագույն դատարանը:

⁴⁷ St'u Rule of Law: European Commission acts to defend judicial independence in Poland, Brussels, 20 December 2017, մատչելի է հետևյալ հղմամբ՝ https://europa.eu/rapid/press-release_IP-17-5367_en.htm:

⁴⁸ St'u The treaty on European union, մատչելի է հետևյալ հղմամբ՝ https://eur-lex.europa.eu/resource.html?uri=cellar:2bf140bf-a3f8-4ab2-b506-fd71826e6da6.0023.02/DOC_1&format=PDF:

⁴⁹ St'u Decision the Polish Supreme Court III UZP 4/18 2 August 2018, մատչելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.iustitia.pl/en/118-information/2469-decision-the-polish-supreme-court-iii-uzp-4-18-2-august-2018>:

68. Եվրոպական խորհրդարանը 2018թ. վերոհիշյալի վերաբերյալ ընդունեց բանաձև⁵⁰՝ ողջունելով Լեհաստանի նկատմամբ Եվրոպական միության պայմանագրի 7-րդ կետը կիրառելու վերաբերյալ Եվրոպական հանձնաժողովի որոշումը և Լեհաստանի իշխանություններին կոչ արեց հետևել Եվրոպական հանձնաժողովի պահանջներին:

69. Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը 2017թ. ԳԴ օրենքի նախագծի մասին իր կարծիքում⁵¹ ընդգծում է՝ դատավորի անփոփոխելիությունը և պաշտոնավարման ժամկետի անխախտելիությունը հանդիսանում են դատավորի անկախության երաշխիքի անբաժանելի մասը: Դատավորները կարող են հեռացվել իրենց պաշտոնից միայն բացառիկ դեպքերում, ինչպիսիք են՝ անաշխատունակությունը, հակաօրինական գործունեությունը, որը անհամատեղելի է դարձնում դատավորի հետագա պաշտոնավարումը, կարգապահական կամ քրեական լուրջ խախտումները:

70. Վենետիկի հանձնաժողովը իր կարծիքում ընդգծում է, որ դատավորների վաղ կենսաթոշակի գնալը ազդում է ոչ միայն նրանց անձնական իրավունքների վրա, այլ նաև կարող է խաթարել դատարանների գործունեությունը, ազդել դատավորների պաշտոնավարման շարունակականության և անվտանգության վրա՝ այդպիսով ճանապարհ բացելով դատական համակարգի անդամների նկատմամբ ազդեցության անտեղի մեծացման համար⁵²,

71. Վենետիկի հանձնաժողովը իր կարծիքի եզրափակիչ մասում պնդում է, որ Լեհաստանը պետք է հրաժարվի դատավորների կենսաթոշակային տարիքը իջեցնող նման նախագծի ընդունումից⁵³:

72. Բազմաթիվ քննադատությունների արդյունքում 2018թ. նոյեմբերին Լեհաստանի խորհրդարանը ընդունեց **ԳԴ օրենքում փոփոխություններ նախատեսող օրինագիծ՝ այդպիսով հրաժարվելով դատավորների վաղ կենսաթոշակի գաղափարից**: Փոփոխությունների համաձայն՝

- **իրենց կամքին հակառակ պաշտոնից ազատված բոլոր դատավորները օրենքի ուժով վերականգնվում էին իրենց պաշտոններում,**

⁵⁰ Տե՛ս European Parliament resolution of 1 March 2018 on the Commission's decision to activate Article 7(1) TEU as regards the situation in Poland, մատչելի է հետևյալ հղմամբ՝

https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-8-2018-0055_EN.html?redirect:

⁵¹ Տե՛ս Opinion On Certain Provisions Of The Draft Act On The Supreme Court Of Poland, JUD-POL/313/2017 [AIC], կետ 67 (http://citizensobservatory.pl/wp-content/uploads/2017/09/313_JUD_POL_30Aug2017_en.pdf)

⁵² Տե՛ս CDL-AD(2017)031, Poland - Opinion on the Draft Act amending the Act on the National Council of the Judiciary; on the Draft Act amending the Act on the Supreme Court, proposed by the President of Poland, and on the Act on the Organisation of Ordinary Courts, adopted by the Commission at its 113th Plenary Session, կետ 49:

⁵³ Տե՛ս նույն տեղում, կետ 52:

- կենսաթոշակային նոր տարիքը՝ 65 տարեկանը, գործելու էր միայն նոր նշանակվող դատավորների նկատմամբ, իսկ գործողների համար կենսաթոշակային տարիք էր մնալու 70 տարեկանը,

- հանվել էր այն կարգավորումը, որով Նախագահը դատավորի կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո իրավունք ուներ երկարացնելու նրա պաշտոնավարման ժամկետը:

73. Այսպիսով, ՀՀ արդարադատության նախարարությունը իր պարզաբանման մեջ որպես լավագույն փորձի օրինակ նշելով նաև Լեհաստանը՝ ըստ երևույթին՝ չի նկատել վերոհիշյալ բոլոր փաստարկները և այն կարևորագույն հանգամանքը, որ բազմաթիվ քննադատություններից հետո Լեհաստանը ի վերջո ստիպված է եղել հրաժարվել դատավորների «վաղ կենսաթոշակի» գաղափարից:

Հունգարիա

74. 2011թ. Հունգարիայում ընդունված օրենքով դատավորների և դատախազների համար կենսաթոշակի տարիքը 70 տարեկանից իջեցվեց 62 տարեկանի: Այս կարգավորումները տարածվեցին ավելի քան 274 դատավորների նկատմամբ: Օրենքը սուր քննադատության արժանացավ Վենետիկի հանձնաժողովի, Եվրոպական հանձնաժողովի, Եվրոպական դատարանի կողմից: Հունգարիայի Սահմանադրական դատարանը օրենքը ճանաչեց Սահմանադրությանը հակասող⁵⁴ և իշխանություններին պարտավորեցրեց դատավորներին վերականգնել իրենց պաշտոններում: Այս որոշումը ընդունվեց և ողջունվեց Վենետիկի հանձնաժողովի կողմից⁵⁵:

⁵⁴ Տե՛ս Decision 33/2012.(VII. 17.) AB, (մատչելի է հետևյալ հղումով՝ https://hunconcourt.hu/uploads/sites/3/2017/11/en_0033_2012.pdf, այցելվել է 20.08.2019 թ.):

⁵⁵ Տե՛ս CDL-AD(2012)020, Venice commission opinion on the cardinal acts on the judiciary that were amended following the adoption of opinion CDL-AD(2012)001 on Hungary, կետ 75:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՎԱՂ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻԵԴ ԴՐԱԿՏԻԿԱՆ

Նախապատմությունը

75. ՀՀ արդարադատության նախարարության կողմից առաջարկվում է 2019թ. օգոստոսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը հրաժարական ներկայացրած Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ, անկախ տարիքից, պահպանել իր հրաժարականի պահին ունեցած աշխատավարձը, դրա նկատմամբ սահմանված հավելավճարները և սոցիալական երաշխիքները՝ մինչև իր պաշտոնավարման տարիքը լրանալը, իսկ պաշտոնավարման տարիքը լրանալուց հետո նա կստանա օրենքով դատավորի համար նախատեսված կենսաթոշակ:

76. ՀՀ արդարադատության նախարարության կողմից՝ որպես դատավորների վաղ կենսաթոշակի ինստիտուտի դրական փորձ, մեջբերվում է «Ջի Բի-ն և այլք ընդդեմ Հունգարիայի» գործը⁵⁶: Իր պարզաբանման մեջ արդարադատության նախարարությունը նշում է.

«Վաղ կենսաթոշակի անցնելու՝ առաջարկվող կարգավորումը չի խաթարում դատական իշխանության անկախությունը: Այս եզրահանգումը հիմնված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Ջի Բի-ն և այլք ընդդեմ Հունգարիայի» գործով կայացված վճռի վրա, որտեղ դատարանն ընդգծել է, որ այն դատավորների մասով, ովքեր կամավոր դիմում են ներկայացրել օրենքով նախատեսված ժամկետը վրա հասնելուց առաջ, պետությունը խախտում թույլ չի տվել, քանի որ. «...պետությունը չի խաղացել ակտիվ կամ ապօրինի դեր դիմումատուներին իրենց կամքին հակառակ կենսաթոշակի ուղարկելու հարցում»:

77. Նախարարության կողմից առաջարկվող կարգավորումների համատեքստում հետաքրքրական է նաև «Բական ընդդեմ Հունգարիայի» գործը⁵⁷: Ստորև վերլուծվում են վերոհիշյալ երկու գործերում տեղ գտած ՄԻԵԴ դիրքորոշումները և դրանց լույսի ներքո՝ նախարարության փաստարկները:

⁵⁶ St' u J.B. and Others against Hungary, Application no. 45434/12, 27/11/2018:

⁵⁷ St' u Baka v. Hungary, Application no. 20261/12, 23/06/2016:

Ջի Բի-ն և այլք ընդդեմ Հունգարիայի

78. Հունգարիայում 1869 թվականից սկսած դատավորների կենսաթոշակի անցնելու տարիք էր սահմանված 70 տարեկանը: Դատավորներին նաև հնարավորություն էր տրված 65 տարեկանը լրանալուն պես իրենց ցանկությամբ անցնել թոշակի կամ շարունակել պաշտոնավարել մինչև 70 տարեկանը:

79. 2011թ. իրականացված սահմանադրական և օրենսդրական փոփոխությունների արդյունքում դատավորների կենսաթոշակի անցնելու տարիքն իջեցվեց՝ հավասարեցվելով կենսաթոշակի մասին օրենքով սահմանված ընդհանուր կենսաթոշակային տարիքին: Հատկանշական է, որ այս փոփոխությունները **տարածվեցին նաև դատախազների և նոտարների նկատմամբ:**

80. Տվյալ գործը ձևավորվել է Հունգարիայի դեմ ներկայացված 3 բողոքներից: Երկու բողոքներով դիմումատուներ են եղել Հունգարիայի տարբեր ատյանների շուրջ 158 դատավոր, իսկ մեկ բողոքով՝ 2 դատախազ: Տարբեր ժամանակահատվածներում 73 դատավոր հետ է վերցրել իր բողոքը, իսկ 3-ը մահացել է:

81. Դիմումատուների գանգատը վերաբերում էր կենսաթոշակային տարիքի իջեցմանը և դրա ազդեցությանը իրենց մասնագիտական կարիերայի և անձնական կյանքի վրա: Դիմումատուները իրենց բողոքում նշում էին, որ խախտվել է մինչև 70 տարեկանը իրենց կարգավիճակից բխող արտոնություններ և վարձատրություն ստանալու օրինական ակնկալիքը:

82. Դիմումատու 4 դատավորներ նախօրոք ներկայացրել էին հրաժարականի դիմում՝ պատճառաբանելով, որ չեն ցանկանում ենթարկվել նվաստացման՝ պարտադրված թոշակի անցնելով:

83. 2012թ.՝ փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո, այն դատավորները, որոնք նոր օրենքի համաձայն հասել էին ընդհանուր կենսաթոշակային տարիքի նախագահի որոշումների հիման վրա, հեռացվեցին դատական համակարգից:

84. Հունգարիայի Սահմանադրական դատարանը 2012թ. հուլիսի 16-ի N 33/2012 որոշմամբ⁵⁸ դատավորների կենսաթոշակի տարիքը նվազեցնող խնդրահարույց կարգավորումները ճանաչեց Սահմանադրությանը հակասող: Նրա գնահատմամբ այդպիսի կարգավորումները խախտում են դատական իշխանության անկախության սահմանադրական սկզբունքը **ձևական և բովանդակային առումներով:** Ֆորմալ առումով դատավորների լիազորությունների

⁵⁸ St' u J.B. and Others against Hungary, կետ 17:

Ժամկետը և կենսաթոշակային տարիքը պետք է սահմանվի հատուկ օրենքով (Cardinal Act⁵⁹)՝ երաշխավորելով դատավորների անփոփոխելիությունը: Այս առումով դատավորների կենսաթոշակային տարիքը սովորական օրենքով սահմանելը չի համապատասխանում այս պահանջին: Կարգավորման հակասահմանադրականությունը բովանդակային առումով դրսևորվել է նրանում, որ նախատեսվել է դատավորների հեռացում շատ կարճ՝ եռամսյա ժամկետում: Չնայած դատավորների պաշտոնավարման առավելագույն տարիքի որոշման հարցում օրենսդրի հարաբերական ազատությանը և այն փաստին, որ առավելագույն տարիքը չի կարող որոշվել Սահմանադրությամբ, Սահմանադրական դատարանը գտել է, որ դատավորների կենսաթոշակային տարիքի իջեցումը պետք է իրականացվի աստիճանաբար՝ ողջամիտ անցումային շրջանով և առանց դատավորների անփոփոխելիության սկզբունքը խախտելու: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը ընդգծել է, որ դատավորներին իրենց պաշտոնից նման ձևով հեռացնելը **խախտում է Սահմանադրության 26-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված դատական իշխանության անկախության սկզբունքը**⁶⁰:

85. Սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշման հիման վրա 2013թ. խորհրդարանը կատարեց օրենսդրական փոփոխություններ: Փոփոխությունների համաձայն՝ դատավորների համար 65 տարեկանից թոշակի անցնելու նորմը ուժի մեջ էր մտնելու 2023թ. հունվարի 1-ից: Այն դատավորները, ովքեր արդեն հեռացվել էին պաշտոնից հակասահմանադրական ճանաչված կարգավորումներով, նոր փոփոխություններով իրավունք ունեին՝

- այն դատարանում, որտեղից գնացել էին թոշակի, անցնել կադրերի ռեզերվ (պահեստային պաշտոն)՝ ստանալով իրենց վերջին հիմնական աշխատավարձի 80 %-ի և թոշակի տարբերությունը: Ավելին՝ յուրաքանչյուր 3 տարին մեկ անգամ նրանց կարող է հանձնարարվել կատարելու դատական կամ կառավարչական գործեր՝ որը կարող է տևել առավելագույնը 2 տարի:

- վերականգնվելու իրենց նախկին պաշտոններում, որտեղից անցել էին թոշակի: Այս դեպքում նույնպես նրանք իրավունք ունեին հարկադրված թոշակի ժամանակահատվածի համար պահանջել իրենց հասանելիք վարձատրությունը:

- վերոհիշյալ 2 կետերից որևէ մեկը չընտրելու դեպքում դատավորները իրավունք ունեին պահանջել միանվագ փոխհատուցում՝ մեկ տարվա աշխատավարձի չափով⁶¹:

⁵⁹ Այս ակտերի ընդունման համար անհրաժեշտ է նիստին ներկա պատգամավորների ձայների առնվազն 2/3-րդի մեծամասնություն:

⁶⁰ St' u J.B. and Others against Hungary, կետ 18:

⁶¹ St' u նույն տեղում, կետ 22:

86. Դիմումատուները ընտրել էին վերոհիշյալ փոխհատուցման տարբերակներից մեկը: Օրենսդրական փոփոխությունների արդյունքում առաջարկվող փոխհատուցման տարբերակներից չէին կարողացել օգտվել միայն այն 4 դատավորները, որոնք հրաժարական էին ներկայացրել սեփական նախաձեռնությամբ:

87. Այսպիսով, փաստական հանգամանքների տեսանկյունից Հունգարիայի դեմ նշված գործում և Հայաստանի իրավիճակում կան մի շարք տարբերություններ.

- Ի տարբերություն արդարադատության նախարարության կողմից առաջարկվող նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ Հունգարիայում իջեցվել է ոչ միայն քուլը դատավորների, այլև նոտարների և դատախազների կենսաթոշակային տարիքը:

- Թոշակի անցնելու դեպքում Հունգարիայում նախատեսվում էր թոշակ, այլ ոչ թե աշխատավարձի պահպանում, ինչպես Նախագծում է:

- Մինչդեռ Նախագծով չի իջեցվում կենսաթոշակի տարիքը, այլ միայն ՍԴ դատավորներին առաջարկվում է հրաժարական տալու դեպքում մինչև թոշակի անցնելը պահպանել իրենց աշխատավարձը: Նման դեպքում խոսք լինել չի կարող վաղ կենսաթոշակի մասին:

88. Այն եզրահանգումը, որին եկել է նախարարությունը մեջբերված հատվածի առաջին նախադասությամբ, ակնհայտորեն չի համապատասխանում գործի հանգամանքներին, դատարանի արտահայտած դիրքորոշումներին.

- Նախարարությունը չի մատնանաշել, որ Հունգարիայում ներպետական մակարդակով արդեն իսկ տվյալ կարգավորումները ճանաչվել են հակասահմանադրական և պետությունը քայլեր է ձեռնարկել իրավիճակի շտկման համար:

- Թյուրըմբռնված և համատեքստից կտրված է նաև նախարարության կողմից վկայակոչվող գործի հատվածը, ըստ որի դատավորների **կամավոր հրաժարականի դեպքում** ՄԻԵԴ-ը վաղ կենսաթոշակային սխեման համարում է թույլատրելի, և պետությունը խախտում թույլ չի տվել: Պարզապես, ՄԻԵԴ-ի քննության առարկան է եղել ոչ թե դատավորների վաղ կենսաթոշակի վերաբերյալ Հունգարիայի կարգավորումների օրինականությունը, այլ այն, թե արդյո՞ք պետությունը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ)⁶² ներքո կարող է պատասխանատվություն ստանձնել դիմումատուների սեփական որոշման, այն է՝ հրաժարական տալու համար: Ըստ այդմ՝ ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ իրենց

⁶² Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, ընդունվել է Եվրոպայի խորհրդի կողմից 04.11.1950թ.:

կամքով հրաժարական ներկայացրած դատավորների վրա Սահմանադրական դատարանի որոշումը և դրա արդյունքում նախատեսված օրենսդրական փոփոխությունները չեն տարածվել, քանի որ նրանք հրաժարական էին ներկայացրել սեփական նախաձեռնությամբ⁶³: Այլ կերպ ասած՝ քանի որ նրանք հրաժարական են ներկայացրել սեփական նախաձեռնությամբ, այդ պատճառով չեն կարող պահանջել որևէ փոխհատուցում: Այդուհանդերձ, ՄԻԵԴ-ի այս դիրքորոշումը ամենևին էլ չի նշանակում, որ ՄԻԵԴ-ը պետության կողմից ներդրված վաղ կենսաթոշակային համակարգը համարում է իրավաչափ: Իր որոշման 18-րդ կետում ՄԻԵԴ-ը վկայակոչել է Հունգարիայի Սահմանադրական դատարանի որոշումը և հենվելով դրա վրա՝ քննել է դատավորների այդ որոշումից բխող փոխհատուցման իրավունքի հարցերը:

- Նախարարության կողմից Սահմանադրական դատարանի դատավորներին առաջարկվող «վաղ կենսաթոշակի» մեխանիզմը առաջին հայացքից կարող է թվալ ոչ պարտադրված և կամավոր: Առաջարկի «կամավոր» լինելու վերաբերյալ եզրահանգում անելու համար պետք է այդ առաջարկը դիտել այն քաղաքական համատեքստում, որն առաջացել է Սահմանադրական դատարանի շուրջ: Գործադիր իշխանության ներկայացուցիչները՝ վարչապետի գլխավորությամբ, ինչպես նաև օրենսդիր իշխանության ներկայացուցիչները պարբերաբար առանց հիմնավոր պատճառների քննադատության են ենթարկում ՄԴ դատավորներին: Իշխող քաղաքական ուժի ճնշումները դրսևորվում են նաև օրենսդրական նախաձեռնությունների տեսքով, օրինակ՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի նախագծով «վաղ կենսաթոշակի» մեխանիզմին որպես «այլընտրանք» է առաջարկվում ոչ իր լիազորությունների կապակցությամբ ՄԴ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում սկսելու դեպքում նրա լիազորությունների ավտոմատ կասեցումը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ դժվար թե նախարարության առաջարկությունը փաստացիորեն բնութագրվի որպես կամավոր:

Բական ընդդեմ Հունգարիայի

89. Տվյալ գործով դիմումատուն եղել է Հունգարիայի Գերագույն դատարանի նախագահ Անդրաս Բական, որը 2009թ. Հունգարիայի խորհրդարանի կողմից 6 տարի ժամկետով՝ մինչև 2015թ. նշանակվել էր այդ պաշտոնին:

90. Դիմումատուն պնդում էր, որ զրկված է եղել իր լիազորությունների վաղաժամ դադարեցումը դատական կարգով բողոքարկելու հնարավորությունից,

⁶³ St' u J.B. and Others against Hungary, կետ 73:

քանի որ իր ազատումը կատարվել է սահմանադրական մակարդակում ամրագրված նորմի հիման վրա, որը գրկել է նրան այդ նորմը թեկուզ Սահմանադրական դատարանում բողոքարկելու հնարավորությունից:

91. Դիմումատուն նաև նշում էր, որ իր ազատումը պայմանավորված է քաղաքական հայացքներով և նախաձեռնված է իշխող ուժի կողմից՝ դատական համակարգի վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների առնչությամբ իր հնչեցրած քննադատության համար:

92. Ինչպես նշվեց վերևում՝ «Ջի Բի-ն և այլք ընդդեմ Հունգարիայի» գործի փաստերում, 2010թ. խորհրդարանական իշխող կոալիցիան ձեռնամուխ եղավ դատական իշխանությանն առնչվող սահմանադրական և օրենսդրական փոփոխությունների, որոնց վերաբերյալ դիմումատուն հանդես է եկել մի շարք քննադատություններով, մասնավորապես՝ դատավորների վաղ կենսաթոշակի օրինագծի:

93. Սահմանադրական փոփոխությունների համաձայն՝ բարձրագույն դատական ատյան է դառնում Կուրիան, որը պետք է լինի Գերագույն դատարանի իրավահաջորդը: Սահմանադրության անցումային դրույթների համաձայն՝ Գերագույն դատարանի բոլոր դատավորները շարունակում են իրենց պաշտոնավարումը Կուրիայում, բացառությամբ նախագահի, որը պետք է ընտրվի վերստին: Միաժամանակ, Կուրիայի նախագահի համար սահմանվում է համատեղելիության նոր չափորոշիչ, որն անհնարին էր դարձնում դիմումատուի վերընտրվելու հնարավորությունը: Այդ չափորոշիչը վերաբերում էր նրան, որ, օրինակ՝ Եվրոպական դատարանում պաշտոնավարումը որպես դատավոր, չէր համարվում աշխատանքային մասնագիտական փորձ, իսկ դիմումատուն իր աշխատանքային փորձի որոշակի հատվածը անցկացրել էր Եվրոպական դատարանում: Վենետիկի հանձնաժողովի գնահատմամբ, չնայած այս պահանջը սահմանվել էր ընդհանուր կերպով, սակայն դա ուղղված էր եղել կոնկրետ անձի: Նման օրենսդրական կարգավորումները խախտում են իրավունքի գերակայության սկզբունքը⁶⁴:

94. 2011թ. խորհրդարան ներկայացվեցին սահմանադրական փոփոխությունների անցումային դրույթները, համաձայն որոնց՝ սահմանադրական փոփոխությունների ուժի մեջ մտնելու պահից դադարեցվելու էին Գերագույն դատարանի նախագահի լիազորությունները, ինչն էլ տեղի ունեցավ 2012թ. հունվարի 1-ին՝ փոփոխությունները ուժի մեջ մտնելու պահից, որից հետո

⁶⁴ Տե՛ս Venice Commission Opinion on Act clxii of 2011 on the legal status and remuneration of judges and act clxi of 2011 on the Organisation and administration of courts of Hungary, Adopted by the Venice Commission at its 90th Plenary Session, CDL-AD(2012)001 կետեր 112-115:

դադարեցվեց դիմումատուի լիազորությունները և նա շարունակեց պաշտոնավարել միայն որպես Գերագույն դատարանի քաղաքացիական պալատի նախագահ:

95. ՄԻԵԴ-ը այս կապակցությամբ նշում է, որ չնայած դիմումատուն շարունակել է պաշտոնավարել որպես քաղաքացիական պալատի նախագահ, նա հեռացվել է Գերագույն դատարանի նախագահի պաշտոնից երեքուկես տարի ավելի շուտ, քան նախատեսված էր նրա ընտրվելու ժամանակ գործող օրենսդրությամբ: Այս ամենը դժվար թե համահունչ լինի դատական իշխանության հատուկ էությանը՝ որպես պետական իշխանության առանձին ճյուղ, ինչպես նաև դատավորների անփոփոխելիության սկզբունքին, որը ՄԻԵԴ նախադեպային իրավունքով և միջազգային իրավունքով ճանաչվել է որպես դատական իշխանության անկախության էական բաղադրատարր⁶⁵:

96. ՄԻԵԴ-ը նշում է, որ դիմումատուն ընտրվել էր Գերագույն դատարանի նախագահ՝ Սահմանադրության և դրանից բխող «Դատարանների կազմակերպման և կառավարման մասին» օրենքի համաձայն: Նշված օրենքով հստակ և սպառիչ կերպով սահմանված էին եղել այն դեպքերը, երբ հնարավոր է նախագահի պաշտոնավարության վաղաժամկետ դադարեցում, այն է՝ կողմերի համաձայնությամբ, հրաժարականի, պաշտոնից հեռացվելու⁶⁶, պաշտոնավարման ժամկետը լրանալու դեպքերում: Այս ամենից ՄԻԵԴ-ը եզրահանգում է, որ դիմումատուն իրավունք ուներ պաշտոնավարելու մինչև իր լիազորությունների ժամկետի ավարտը կամ օրենքով սահմանված դեպքերում լիազորությունների վաղաժամ դադարելը⁶⁷: Դիմումատուի՝ մինչև օրենքով սահմանված ժամկետի լրանալը պաշտոնավարելու իրավունքը հիմնավորվում էր նաև Սահմանադրությամբ երաշխավորված դատարանների անկախության և դատավորների անփոփոխելիության սկզբունքներով⁶⁸:

97. ՄԻԵԴ-ը նշում է՝ օրենսդրական փոփոխությունները, ինչի արդյունքում դադարեցվել է դիմումատուի պաշտոնավարումը, չէր կարող հետադարձ ուժով վերացնել դիմումատուի՝ ընտրվելու ժամանակ գործող իրավունքի պաշտպանության հնարավորությունը: Ինչպես արդեն նշվել է, տվյալ նորմերը հստակ սահմանել էին պաշտոնավարման վեցամյա ժամկետ և այն հիմքերը, որոնց առկայության դեպքում այն կարող էր դադարել: Նույնիսկ լիազորությունների վաղաժամ դադարման, մասնավորապես՝ պաշտոնից հեռացման դեպքում, դիմումատուն իր ընտրվելու ժամանակ գործող

⁶⁵ St' u case of Baka v. Hungary, կետ 172:

⁶⁶ Պաշտոնից հեռացման միակ հիմքը պաշտոնավարման ընթացքում դրսևորած ոչ կոմպետենտ վարքագիծն է: Այս դեպքում նույնպես այդ որոշումը ենթակա էր դատական կարգով բողոքարկման:

⁶⁷ St' u case of Baka v. Hungary, կետ 107:

⁶⁸ St' u նույն տեղում, կետ 108:

օրենսդրության համաձայն իրավունք ուներ այդ որոշումը դատական կարգով բողոքարկելու:

98. Իրավական նորմերը, որոնց արդյունքում դադարեցվել էին դիմումատուի լիազորությունները, ամրագրված էին սահմանադրական փոփոխությունների անցումային դրույթներում: Այս հանգամանքը զրկում էր դիմումատուին այդ նորմերը որևէ դատական ատյանում, անգամ Սահմանադրական դատարանում, բողոքարկելու հնարավորությունից:

99. ՄԻԵԴ-ը իր վճռում հիշեցնում է, որ դատարան դիմելու իրավունքը, այն է՝ դատարաններում քաղաքացիական վարույթ հարուցելը, ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքի բնորոշ տարր է, որը սահմանում է դատարանի կազմավորման, կազմի և քննության իրականացման երաշխիքները: Այս ամբողջը ձևավորում է 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արդար դատաքննության իրավունքը:

100. Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՄԻԵԴ-ը գտել է, որ պետությունի չի ապահովել դիմումատուի դատարան դիմելու իրավունքը՝ այդպիսով թույլ տալով ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ արդար դատաքննության իրավունքի խախտում⁶⁹:

101. Անդրադառնալով դիմումատուի այն գանգատին, որ իր ազատումը պայմանավորված է եղել քաղաքական հայացքներով՝ ՄԻԵԴ-ը արձանագրել է, որ պետությունը չի կարողացել հիմնավորված կերպով ցույց տալ, որ խնդրահարույց կարգավորումները՝ դիմումատուի պաշտոնից հեռացումը, իրականացվել են բարձրագույն դատական մարմնի բարեփոխումների համատեքստում: Հետևաբար, ՄԻԵԴ-ը համաձայնել է դիմումատուի հետ, որ նրա պաշտոնից ազատումը կապված է եղել վերջինիս քաղաքական հայացքներով և դատական համակարգի բարեփոխումների վերաբերյալ արտահայտած քննադատությամբ⁷⁰: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՄԻԵԴ-ը արձանագրել է, որ դիմումատուին պաշտոնից վաղաժամ հեռացնելը առաջացրել է ՄԻԵԿ 10-րդ հոդվածով երաշխավորված ազատորեն արտահայտվելու իրավունքի խախտում⁷¹:

102. ՄԻԵԴ-ը նաև գտել է, որ դիմումատուին պաշտոնից հեռացնելը ունեցել է «կանխարգելիչ» նշանակություն, քանի որ դրանով սահմանափակվել է ոչ միայն դիմումատուի ազատ արտահայտվելու իրավունքը, այլ դա կարող էր նաև ազդել մյուս դատավորների և դատարանների նախագահների՝ հետագայում դատական համակարգի հետ կապված փոփոխությունների և առհասարակ դատական իշխանության անկախության մասին ազատորեն արտահայտվելուն:

⁶⁹ Տե՛ս նույն տեղում, կետ 122:

⁷⁰ Տե՛ս նույն տեղում, կետ 151:

⁷¹ Տե՛ս նույն տեղում, կետ 176:

103. Արձանագրելով վերոհիշյալ խախտումները՝ ՄԻԵԴ-ը միաժամանակ Հունգարիային պարտավորեցրել է դիմումատուին՝ որպես փոխհատուցում, վճարել ընդհանուր 100,000 եվրո:

104. ՄԻԵԴ-ը իր վճռում անդրադարձ է կատարել նաև եվրոպական կառույցների՝ տվյալ հարցի վերաբերյալ դիրքորոշումներին.

- Վենետիկի հանձնաժողովը Հունգարիայի սահմանադրական փոփոխությունների նախագծի մասին իր կարծիքում նշում է, որ Սահմանադրության փոփոխությունների անցումային դրույթները չպետք է օգտագործվեն նախորդ Սահմանադրությամբ նշանակված կամ ընտրված անձանց պաշտոնավարումը դադարեցնելու համար⁷²:

- **Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը** 2013թ. հրապարակել է զեկույց⁷³՝ պահանջելով իրականացնել դիտակումներ Հունգարիայի նկատմամբ: Զեկույցում կրկին քննադատվում է խտրական վերաբերմունքը, որը դրսևորվել էր դիմումատուի նկատմամբ: Շատերի կողմից այս կարգավորումները դիտարկվեցին որպես միջոց՝ ազատվելու Գերագույն դատարանի նախագահից, ով հանդես էր եկել մի շարք քննադատություններով՝ կապված դատական իշխանության վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների հետ⁷⁴:

105. «Բական ընդդեմ Հունգարիայի» գործը հետաքրքրական է նաև այն առումով, որ արդարադատության նախարարության կողմից իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում 2019թ. օգոստոսի 26-ին հրապարակվել է «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ Ռազմավարություն): Ռազմավարության ամրագրված նպատակներից մեկը սահմանադրական բարեփոխումների իրականացումն է: Նախատեսվող փոփոխությունների համար՝ որպես խնդրահարույց նորմ, մեջբերվում է Սահմանադրության 213-րդ հոդվածը, որը նախատեսում է, որ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի նախագահը և անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ սահմանված ժամկետի ավարտը:

⁷² St' u Venice Commission Opinion on the new Constitution of Hungary, Adopted by the Venice Commission at its 87th plenary session, CDL-AD(2011)016 կետ 140:

⁷³ St' u Parliamentary Assembly Council of Europe, Doc. 13229, 10 June 2013, Request for the opening of a monitoring procedure in respect of Hungary, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://semantic-pace.net/tools/pdf.aspx?doc=aHR0cDovL2Fzc2VtYmx5LmNvZS5pbmQvbnNveG1sL1hSZWYvWDJlLURXLWV4dHluYXNwP2ZpbGVpZD0xOTc3NyZsYW5nPUVO&xsl=aHR0cDovL3NlbWFudGljcGFjZS5uZXQvWVHNsdC9QZGYvWFJlZi1XRC1BVCIYUwYUERGLezhbA==&xslparams=ZmlsZWlkeTE5Nzc3:>

⁷⁴ St' u նույն տեղում, կետ 113 և 114:

106. Հաշվի առնելով այն քաղաքական մթնոլորտը և ճնշումները, որ գործադրվում են գործադիր և օրենսդիր իշխանությունների կողմից Սահմանադրական դատարանի նկատմամբ, «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի նախագծով առաջարկվող «վաղ կենսաթոշակի» մեխանիզմը՝ չի բացառվում, որ նախատեսվող փոփոխությունները կպարունակեն կարգավորումներ, որոնք միտված կլինեն Ռազմավարությամբ սահմանված «2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ նախատեսված Սահմանադրական դատարանի կազմավորման մոդելի կենսագործելուն»՝ այդպիսով ձերբազատվելով Սահմանադրական դատարանի՝ իշխանության համար անցանկալի դատավորներից:

107. Նախարարությունը ՀՀ Սահմանադրական դատարանի կազմը որևէ կերպ փոփոխող նախաձեռնությունից առաջ պետք է առնվազն հաշվի առնի, որ.

- Հունգարիայի կողմից նման գործողությունները ՄԻԵԴ-ի կողմից ճանաչվել են առնվազն որպես ՄԻԵԿ երկու հոդվածների խախտումներ, ինչպես նաև սահմանվել է փոխհատուցում՝ 100,000 եվրոյի չափով:

- Հունգարիայում օրենսդրական փոփոխությունների արդյունքում Գերագույն դատարանի նախագահը չի հեռացվել դատական համակարգից, այլ շարունակել է պաշտոնավարել որպես քաղաքացիական պալատի նախագահ:

- ՄԻԵԴ-ը արձանագրել է, որ այն փոփոխությունները, որոնք ուղղված են կոնկրետ անձանց դեմ և նպատակ ունեն հեռացնել վերջիններիս իրենց զբաղեցրած պաշտոններից կամ սահմանել համապատասխան պաշտոնի համար այնպիսի համատեղելիության պահանջներ, որոնք անհնարին են դարձնում նրանց պաշտոնավարումը կամ կրկին ընտրվելու հնարավորությունը, համատեղելի չէ դատավորների անփոփոխելիության և դատական իշխանության անկախության սկզբունքների հետ:

- ՄԻԵԴ-ը եկել է այս եզրահանգումներին՝ հաշվի առնելով այն քաղաքական իրավիճակը, որը առկա է եղել Հունգարիայում: Շատ դեպքերում Հունգարիայի իշխանությունների կողմից բերվող փաստարկը, որ դիմումատուն հեռացվել է պաշտոնից դատական համակարգի բարեփոխումների համատեքստում, չի ընդունվել: ՄԻԵԴ-ը դիմումատուի պաշտոնից հեռացումը պայմանավորել է քաղաքական հայացքներով և դատական համակարգի փոփոխությունների վերաբերյալ հնչեցված քննադատություններով:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: